

891.99

2-58

856

9068 ՀԻՄԷՆ Ք.

# ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՅԻՃԸ

Կ Ա Մ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ԴՅՈՒՆԻ Կ ԱՐԱՐ

Տպագր. Ի. ՏԼԵ ՍԵՂՍՅԱՆԻ

Կ. ՊՈԼԻՍ, ԳՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ՄՕԼԱ ԹԱՇ

1911

857

331-99

Z-58

10 NOV 2011  
858

4

ԳՐԵՑ ՀԻՄԷՆ Ք

# ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱԿԻՃԸ

Կ Ա Մ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ  
ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ



Տպագր. Մ. ՏԼԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ՍՕԼԱ ԹԱՀ

1911

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Անգլիական առած մը կ'ըսէ. «Կեանքը կտանկեր-  
 գութիւն մըն է անոր համար որ կը խորժի, և եզերկը-  
 գութիւն մը՝ անոր համար որ կ'զգայ»: Աշխարհի ընկե-  
 րային վերքերը՝ սկիզբն ի վեր, ընդհանրապէս և հայ-  
 կական անցեալ և ներկայ իրականութիւնը, ժամանա-  
 րապէս, իրաւունք կուտան ինձ յորդորելու ժամանա-  
 կակիցներս աւելի խորհող ըլլալ՝ ջան թէ զգայուն: Ե-  
 կեանքը աշուղտով թերեւս տանկի ըլլայ մի քիչ: Ար-  
 դարեւ, ի՞նչ կ'արժեն երեմիական սղբերը, եթէ ոչ ար-  
 տաղրկաւ աւելի կամ նուազ բանաստեղծներ, և  
 արցունքը աչաց մէջ տեսողութիւնը կը պղտորէ, մընչ-  
 զեւ ծպխար ընդհակառակն փա՛յլ կուտայ անոր, և գի-  
 տէք թէ պատճառ մը որչան ճշգրտապէս տեսնուի,  
 այնչան ի վիճակի կ'ըլլանք զիրարթեամբ զայն մէջտե-  
 ղն վերցնելու: Բայց, թողունք համամարդկային դա-  
 ւերը, և նայինք մեր ծով պատերազմ, ինչպէս կ'ըսեն:  
 Այսօր, մեր ընդհանուր ցուերուն դարձան տանկու պաշ-  
 տուն ունեցող, մեր կրօն անթիւ հարստահարութեանց և  
 անիրարութեանց դէմ բողոքարկու, մեր ենթարկուած  
 հարածանքներու դէմ ապաւեն, վերջապէս մեր ներկա-  
 յացուցիչը եզով մարմինն ո՞վ է, եթէ ոչ Պատրիարքա-  
 րանը: Բայց, ո՞վ ճշգրտութիւն, եկուր սես որ այդ  
 Պատրիարքարանն ըլլ իր հովիտները, իր կազմովը, իր  
 ուղղութեամբը Ազգն, գիտուն պիտա մ'աւելցած է, իր  
 թէ եղածները չի բռնէին: Հարցարննեցէ՛ք ամբողջ Ազ-  
 րը, Մամուլը, ամէնն ալ դժգոհութիւն, զայրոյթ պիտի  
 յայտնեն ձեզ՝ Պատրիարքարանին դէմ: Ապա ուրեմն  
 ինչպէ՞ս այն անխաղ կը շարունակէ իր ընթացքը, պի-



10095-57

տի հարցնէք.—Այո՛, որովհետև մենք զերազանցապէս  
 պզտանահամ ժողովուրդ մըն ենք՝ երբ միաբանելու,  
 շինելու, բարեկարգելու վրայ է խնդիրը. աբիշ կերպով  
 կարելի չէ մեկնել այս երևույթը, երբ բոլս մը մարդիկ  
 թի՛ն կը խնդան ամբողջ Աշգին, մինչ այն իր բառնցչը  
 կը ցուցանէ անոնց . . . :

Եղած է ժամանակ մը, երբ այս ասօրը զրոյր  
 ինքն ալ շատ մօտէն շփուած է ազգային շուքիսացին  
 կեանքին, տեսած է թէ ի՞նչպիսի անփութութեամբ կը  
 խաղցուի Ազգին ճակատագրին հետ, թէ գաւառացիին  
 կեանքի և մահու ինքիքներուն նկատմամբ ի՞նչ թե-  
 թեւ վերաբերմունք ցոյց կը արուի, թէ ի՞նչ ծիծաղելի  
 հակասութիւններ, կասկեութիւններ, մնջկատակներ կը  
 խաղցուին, վերջապէս շատ մօտէն ճանչցած է ազգ-  
 մեծ բեմադարգարներ, կատակերգանքներ, անպարպանք  
 իսկ, և համոզում գոյացուցած է թէ Հայ ժողովուրդը  
 իսկապէս հիանալի է իր մշակութեանը համար, որ կը  
 չփոթէ կատակերգութիւնը իրականութեան հետ, նման  
 այն հանդիսականին, որ թաարմն երթալով բեմին վրայ  
 մարքիզի, իշխանի երևույթով տեսած զերակատարները  
 կը նկատէ իբր այդ, որ կը մոլեգնի տն ուսնի մը  
 անպատկառութենէն և Օթէլլօյի մը գազանութենէն, և  
 կը յուզուի Ռօմէօյի մը կամ Ժիւլիէթի մը գժրախառ-  
 թիւններէն, և վարագոյրը գոցուելէն յետոյ իսկ զեռ  
 կ'սպասէ, բեմին վրայ երևցող անձերու վերերևու-  
 մին, բեմին վրայ կատարուած հովուերգութեանց շարու-  
 նակութեանը, խոստումներու գործադրութեանը . . .  
 ամանք քարկոծելու և ամանք ալ ողջագուրելու համար :

Միամի՛տ ժողովուրդ . . . :

Իսկ թէ ի՞նչ մթնոց պէտք է մտքբելու համար Ալա-  
 կանուքեան ձանկը, ասիկա իմ ձեռնհասութենէս վեր  
 է. հարցուցէք ճարտարագէտներուն, երկրաշափներուն  
 թէ ինչ կ'ընեն չորցնելու համար Մէրսինի և Գոնիայի  
 գաշտերուն ճանիճները :

Իայց բանանք վարագոյրը :

Ա Ն Ձ Ի Ն Ք

- Ա. ԱՐԱՐ.— Տեղապանը եւ իր յարաբերութիւնք
- Բ. ԱՐԱՐ.— Վարչութիւնը
- Գ. ԱՐԱՐ.— Ուսումնական խորհուրդ
- Դ. ԱՐԱՐ.— Տնտեսական խորհուրդ

## Ա. ԱՐԱՐ

(ՏԵՂԱՊԱՀԸ)

ՏԵՂԱՊԱՀ Ա.

ՏԵՂԱՊԱՀԸ (Նսած պատօտասեղին՝ ինքնիբեւ մը-  
 սախոնելով) . — Օ՛ֆ, սա ամիսներն ալ լինային ահ  
 Պատրիարք ըլլայի մէջ մը, սանկ տաքը տաքընա, ա-  
 ռանց ասկիարութիւնս մէջտեղ եղնելու և տակաւին  
 զուգուցած գործունէութեանս և խլած ծափերուս ալ-  
 զեցութեանը տակ... (պահ մը ետագելով) շխտակք, սա  
 Գարիկը սքանչելի մարդ մ'է. իմ արժանիքներս, իմ գոր-  
 ծունէութիւններս, Բ. Գրան տուած այցելութիւններս,  
 մէկ խօսքով բոլոր ըրած մեծ ու փոքր... գոր-  
 ծերս քօլօններով կը հրամայէ... Բիւզանդիոնի ընթեր-  
 զողներուն: (հասանալով) Ո՞վ կ'ըլլան կոր եղեր իմ  
 մրցակիցներս... ո՞վ են որ անոնք, Կիւլթսէրա՞նը, Օր-  
 մանտա՞նը, Երէցեա՞նը, ես անոնց ամէնուն ալ հախէն  
 կուգամ. Գէորգ Գ.ի հոգոյն վրայ կ'երգումս որ Պատ-  
 ըրարք պիտի ըլլամ: (Այս միջոցին՝ յուզումեն՝ ստրեկ-  
 րեայ մասերուն մեջ խորսումներ պատահելուն, կ'սխիպուի-  
 րնդասել մտախորտեանց շարք եւ փոյի սենեակը  
 անցնիլ... հանդարտեցնելու համար զանոնք: Նոյն պա-  
 հուն կառքի մը քաւարման ձայնը կը լսուի, Բ. դեսպա-  
 նասան քաւարման է եկողը. Օրբազանը կարն կապելով  
 ձեռք առած զսպողական միջոցները, սենեակը կուգայ.

բարգմանը բաւականներու առաջնորդութեամբ մինչեւ դանկինին դուռը կուգայ. յանկարծ օփօփանախի հոսմք կը ծաւալի մթնոլորտին մեջ, եւ կ'երբայ գգուելու բարգմանին ռեզուլտները, եւ նոյննեսայն սենեկապան մը հովի սենեակէն արագօրէն կը վերցնէ նոյն բուրուցնամանը, անօր մը՝ զոր Ֆրանսացիք գիշերաման կը կոչեն, բայց մեք կրնանք զայն *ցերեկաման* ալ անուանել, եւ որ այսօր պատմական նշանակութիւն ունեցող ազգային անօր մը դարձած է, ասէն հայու արտի մօտիկ . . . :

**Տ Ե Ա Ւ Բ.**

(Տեղապանը, բարգմանը, ապա Յ. Ալվիսար)

(Թարգմանը ներս կը մտնէ, ընդփոյք կը կանչուի Յ. Ալվիսար, բարգմանի դեր կատարելու համար):

**ՏԵՂԱՊԱՆ.** — Բարի եկաք, հրամանեցէք:

**ԹԱՐԳՄԱՆ.** — Շնորհակալ եմ, ի՞նչպէս է Ձեր Սըրբագնութիւնը:

**ՏԵՂԱՊԱՆ.** — Ես ջաւագար եմ . . . այսինքն, ըսեղ կ'ուզեմ թէ . . . լաւ եմ . . . վեց մօլութիւն ունէի, անցեալ փետրուարին եօթներորդ մ'ալ աւելցաւ: Ես, ժամանակին Գէորդ Գ. Կաթողիկոսի օրով Ռուսիա դացած եմ, հոն այնչափ գործունէութիւն և արդիւնքներ ջալցուցած եմ որ էջմիածնի միաբանները զիս չքաշելով հպածած են, ես ալ Պօլիս ապաստանած եմ: Կախորդ ռէժիմի ատեն, բուռն կերպով պայքարած եմ Համլտին և Օրմանեանին դէմ. նոր ռէժիմը յայտարարուելուն քաշուած եմ Օրմազդիւղ, իր պարտականութիւնը վստիկ կատարած մարդու մը ներքին գոհունակութեամբ:

արտհետեւ Սանժանադրութեան վերականգնումըն համար անապին պայքարներ մղած եմ. վերջապէս, հաջաւակ որ բնաւ չէի փափաքէր, Ազգը զիս ընտրեց այս սեղապանական պաշտօնին, որը՝ արդէն ինչպէս գիտէք, աւժամեայ է, և բնաւ մտադրութիւն չունիմ Պատրիարք ըլլալու:

**ԹԱՐԳՄԱՆ.** — Կը չնորհաւորեմ Հայ Ազգը, որ Ձեզ նման ձեռնհաս, կարող և գործ . . . ող պետ մ'ընարած է, և կը մաղթեմ որ Ձեր Սրբաշնութիւնը Պատրիարք ըլլայ:

**ՏԵՂԱՊԱՆ.** — Շնորհակալ եմ, միայն թէ ինչպէս ըսի, սատր բնաւ չեմ փափաքիր, բայց պատրաստ եմ Ազգիս ձայնին հետեւելու . . .

(Թարգմանը ապա հրածեց առնելով՝ կը մեկնի):

**Տ Ե Ա Ւ Գ.**

(Քիչ վերջը ներս կը մտնեն Յ. Ծառիկեան, Ռ. Զարդարեան, Ա. Վառեան):

**ՏԵՂԱՊԱՆ.** — Օ՛, հրամանեցէ՛ք, սանկ նստեցէք ինդրեմ. բարապան, սուրճ մը բեր:

**ՀԻՒՐԵՐԸ.** — Ի՞նչպէս էք, Սրբազան:

**ՏԵՂԱՊԱՆ.** — Շատ լաւ եմ, որդեակներս, միայն թէ յօգացուս այսօրերս դարձեալ սաստկացաւ: ատաջուան վրայ գիշերները երեք հեղ աւելի կ'եղնեմ կոր, աբիւնս ա՛լ աւելի թանձրացեր է. բայց բան մը չէ, ես կը տոկամ. սատր ալ ապացոյցը սա՛ է որ Օրմանեանի օրով այնքան հալածանքներու տոկացի: Հա՛, աղէկ միտքս ինկաւ. Օրմանեան նոյն-իսկ անգամ մը զիս ամ-

բառաանկց իբր յեղափոխական . ես էի որ միշտ բողոք  
 էր բանայի գաւառներու մէջ տիրող հարստանարու-  
 թիւներու, հալածանքներու գեմ, այնպէս որ նոյն իսկ  
 Երլարզ կը քաշուէր ինձմէ . ժողովներու մէջ քաջա-  
 բար Օրմանեանի երեսին կը զարնէի իր հակառակմանա-  
 դրական արարքները և Ազգ . Սահմանադրութեան գոր-  
 ծադրութիւնը կը պահանջէի : Սրբէն ես միշտ համակիր  
 եղած իմ յեղափոխականներուն , մանաւորաբար Դաշ-  
 նակցականներուն :

ՀԻՒՐՆԵՐԸ .— Մեր ապագայ Պատրիարքն ես Սըր-  
 բազան :

ՏԵՂԱՊԱՀ .— Շնորհակալ եմ, բայց դիտել կուտամ  
 ձեզ թէ ես բնաւ միտքէս չեմ անցուցած Պատրիարք  
 ըլլալ և չեմ ալ փափաքիր տաոր, միայն թէ պարասաւ  
 եմ Ազգին ձայնին հետեւելու , ուր որ կոչէ զի :

(Հիւրերը հրածեօս առնելով կը մեկնին : Պան մը  
 Ն. Սըբազմուրեան յողացար այնքան կը սասկանայ որ  
 մուռակները հանել կուտայ եւ երկու ոտները օդին մէջ  
 վեր առած արողի մը կը կրքնցնէ, եւ այս վիճակին  
 մէջ գլխիվար կը մնայ :)

— 0 —

Տ Ե Ա Ւ Լ Գ .

(Ներս կը մտնեն Ա. Թօփալեան, Հեքում Աքբեան,  
 Չիֆթե Սարրաֆ եւ Վ. Ռեֆեան եֆեկեսիները :)

ՏԵՂԱՊԱՀ .— Կը ներէք էֆէնտիներ, ցուերս այն-  
 քան ստակացած են որ այս դիրքին մէջ կը ահմէք  
 դիս . հրամայէք . բարապա՛ն, սուրճ բեր . ինչպէ՛ս էք  
 էֆէնտիներ, Կեդրոնի խմբակցութիւնը ի՞նչ կ'ընէ կոր  
 Աղատականներուն հախէն գայու համար :

ՀԻՒՐՆԵՐԸ .— Շնորհակալ ենք, Սըբազան Հայր ,  
 կ'աշխատենք կոր և կը յուսանք որ հոսիւ Ձեր Սըր-  
 բազմութեան՝ վերջնականապէս կը ջախջախենք գա-  
 նանք :

ՏԵՂԱՊԱՀ .— Հա՛ , կեցցէք , ա՛նա այսպէս ըլլալու  
 է , անոսք ո՛վ կ'ըլլան կոր որ ազգ . գործերը պիտի  
 վարեն , ինձի չեզոք կը կարծեն , միամիտները . . . Վն  
 դիտեր որ ես անոնց խերը պիտի անիծեմ , անոնք ո՛վ  
 են որ ժողովուրդը ոտքի կը հանեն , բմբոստու-  
 թեան կը գրգռեն , ես ձեզի հետ եմ մինչեւ վերջ ,  
 անհոգ եղիք , թէեւ մարմնով ցաւազար , բայց կամքս  
 ստեղծն է :

ՀԻՒՐՆԵՐԸ .— Կարողութեան և յաջողութեան կը  
 մտղթենք , Սըբազան Հայր :

(Հիւրերը կը մեկնին : Սըբազանը կը հրամայէ կառէր  
 պատրաստել : Դուռ երբալու համար : Հինգ վարդիեա-  
 նէն կառէր կը պատրաստի, Սըբազանը կաղարով դուռս  
 կ'եղնէ :

Դուրսը , նրբանցիկն մէջ, մի քանի խեղճուկ գաւա-  
 ռացիներ եւ ուսանողներ, որ մեկուն հողը յափճակ-  
 ւած, ո՛ր մեկուն բռնակը կտրուած, կը դիմեն Սըբա-  
 զանին :

ՏԵՂԱՊԱՀԸ .— (ուսուրեանք) Ես անհաստիւն գոր-  
 ծերու չեմ միջամտեր , ազգային գործերու կը խառնուիմ :

(Ի՛ գուր խեղճ պանդուխտները կը քախառնեն քե  
 իրենի տղ ազգային անհաս են , Սըբազանը կորուեցեմ  
 բսելով կը վաճիտ գանձեմ եւ վար իջնելով կառէր կը հասի :



Յ Ե Ն Ք Ի Ե .

(Տեսարանը կը ներկայացնէ Եպարհոսական Դանի-  
նը : Սենեկայաններ ներս կ'առաջնորդեն Արբազանը :

ԵՊԱՐԲՈՍԸ . — Բարի եկաք , Տեղապահ Սրբազան ,  
Ի՞նչպէս էք :

ՏԵՂԱՊԱՀ . — Աղօթող ենք Ձեր վսեմութեան կե-  
նացը :

ԵՊԱՐԲՈՍԸ . — Ի՞նչպէս են Ազգ . գործերը :

ՏԵՂԱՊԱՀ . — Շնորհիւ Ձեր վսեմութեան , և Գան-  
լիճին արդարակորով քաղաքականութեան գործերը շատ  
բաւ կ'ընթանան . միայն թէ երբեմն փոքր անպատեհու-  
թիւններ կը պատահին հոս ու հոն , որոնք սակայն ան-  
նըչան բաներ են և կը յուսանք որ չնորհիւ Ձեր վսե-  
մութեան ամէն բան կը հարթուի : Նախ կայ Չարսան-  
ձագի հողային խնդիրը , որ ցարդ չհարգադրուեցաւ . այ-  
սօր , նոր հեռագիր մ'աւի , որով կը յայտնուի թէ 20,000  
Հայեր դուրս նետուած են իրենց սեփական բնակարան-  
ներէն , իրենց յախչտակիչներուն խոյ ձեռքով :

ԵՊԱՐԲՈՍԸ . — Կառավարութիւնը հողային օրինագծի  
գործադրութեան առնն նկատողութեան պիտի ամենէ այդ  
հարցը , և կը յուսանք որ երկու կողման համար ալ գոհա-  
ցուցիչ և արդար ելքի մը կը յանդի աչգ խնդիրը :

ՏԵՂԱՊԱՀ . — Յետոյ կայ կրթական խնդիրը . գա-  
ւառներէն գանդամներ տեղի կ'ունենան թէ տեղ տեղ  
ուսուցիչները զինուոր կը տարուին , որով վարժարան-  
ները կ'ստիպուին փակուիլ , թէ Առաջնորդներուն հե-  
ղինակութիւնը կ'անտեսուի Ազգ . վարժարանաց վրայ ,  
և թէ գաւառաց կրթական Բննիչները ըստ կամս մի-  
ջամտութիւններ կ'ընեն Ազգ . վարժարանաց ներքին

կարգադրութեան վերաբերեալ խնդրոց մասին : Կը  
խնդրենք որ բարձուն այս սանձադութիւնները :

ԵՊԱՐԲՈՍԸ . — Այս մասն պիտի խօսիմ կրթական  
նախարարին հետ , և թերեւս կարելի ըլլայ ուսուցչաց  
համար մը քանի ամսուան պայմանաժամ ամենկ . դա-  
լով միւս կէտերուն , այն առնն միայն կարելի է կար-  
գադրութիւն թ'ընել , երբ ամենց մասին Պետական  
կորնքոյց մէջ պատրաստուելիք Օրինադրմն լրանայ և  
վսեմարայի :

ՏԵՂԱՊԱՀ . — Յատն Այլին չնորձակայութիւն կը  
յայտնեմ :

(Կը մեկնի) :

Յ Ե Ն Ք Ի Ը .

(Տեսարանը կը ներկայացնէ Ներքին գործոց պա-  
սօնատներ) :

ՆԱԽԱՐԱՐ . — Հրահանգէք . Սրբազան :

ՏԵՂԱՊԱՀ . — Ծառայ եմ , վսեմ . Տէր , ի՞նչպէս էք :

ՆԱԽԱՐԱՐ . — Շնորհակալ եմ , Պատրիարքարանի  
գործերը ի՞նչ վիճակի մէջ են :

ՏԵՂԱՊԱՀ . — Խիստ բաւազոյն վիճակի մէջ . մի  
քանի առկախ մնացած խնդիրներ կային , զորոնք ան-  
միջապէս մաքրեցի , և այսօր նախանձեկի դրութեան մը  
մէջ գրուած է ամէն բան : Միայն թէ , թոյլ առեք ինձ  
միշտեցնել Ձեր վսեմութեան Հասան Պէյլի եկեղեցւոյ  
քանդման խնդիրը , որ խոր վիշտ պատճառած է մեր  
հասարակութեան մէջ :

**ՆԱԽԱՐԱՐ.** — Այս մասին թըրփնայութիւն մը ըլլալու է : Ատանայի վրեժ, կուտակալը մէկ շանի օրէն Պօլիս կուգայ . կըր համնի՝ այն ատեն ըսելով նաև անոր լուսարանութիւնները, պէտք կգածը ի գործ կը գնենք :  
**ՏԵՂԱՊԱՀ.** — Ծնորմակալ ենք : (Կը մեկնի) :

Տ Ե Ն Ի Լ Է .

(Տեսարանը կը ներկայացնէ այս անգամ Գասական Նախարարութեան պաշտօնատները) :  
**ՆԱԽԱՐԱՐ.** — Հրամանեցէք, Սրբազան, ի՞նչ հրաման ունիք :

**ՏԵՂԱՊԱՀ.** — Քաւ լիցի, վրեժ. Տէր : Այս օրերս լուր ատինք թէ Աֆիօն Գարանիարի Պօլօլաանի գլուղին մէջ հայ աղջիկ մը ատուանդուած և բռնի իրաւաւորուած է, կը հաճի՞ք բացատրել մեզ խնդիրը :

**ՆԱԽԱՐԱՐ.** — Այս մասին Ներքին գործոց նախարարին մըջոցաւ գրեցի Պրուտայի կուտակալին, ինչպէս նաև Աֆիօն Գարանիարի և Քէօթանկայի միւթէտարրֆ-Ներուն, և սրատասխան կէլաւ թէ այս գործողութիւնը կատարուած է օրինական ըզրօր ձեւակերպութեամբ և արգարութեամբ :

**ՏԵՂԱՊԱՀ.** — Ներեցէք, Տէր նախարար, բայց մեր Ատաջնորդը կը գրէ թէ հակառակ կեզբոնի հրահանգին թէ կրօնափոխութեան գործողութիւնը Գարանիարի մէջ անգլի ունենայ, այդ հրահանգը անգործադրելի մնացած է և անգլուոյն վրայ կատարուած է գործողութիւնը, ինչ որ անիթ տուած է ըզրօրի :

**ՆԱԽԱՐԱՐ.** — Այդ կէտն ալ օրինական է . որովհետև Պօլօլաանի Մեկիար Խարէի մէջ Քրիստոնեայ անդամ մը դանուած ըլլալուն պատճառաւ, հարկ չէ դատուած անդափոխել գործողութիւնը :

(Սրբազանը հրածեօս առնելով, իրիկունը ու՛՛ս ասեմ կը վե աղաւնայ Պասիարբարան, խնջեալ և վասակեալ ! . . .)

×

Հետեւեալ օրը՝ կրեկոյեան թերթի մը մէջ կը կարդանք .—

«Տեղապան Սրբազանը երկ յարաբերական ինչ ինչ «կարեւոր խնդրոց համար այցելութիւն տուաւ Բ. Գրան, «նախարարներէն շատրու : Նախ Մեծ Եղարնոսին ներկայացաւ և բուն կերպով բողոքեց Չարսանագի հողային խնդրոյն և կրքական հարցին նկատմամբ : Եւ «պարբար Ն. Սրբազանութեան առաջարկութեան համեմատ, որոշեց նոր ֆենիչ Մասնախումբ մը գրկել, տեղւոյն վրայ՝ ֆենիչու գիւղացոց զանգասներ, և զոնա «ցում սարու անոց : Այս Մասնախումբին պիտի անդամակցին նաև Պասիարբարանի կայմե երկու անձ . իսկ «կրքական խնդրոյ մասին՝ վից ամուսան պարմանածամ «տուեցաւ ուսուցիչներուն համար :

«Ապա, Ներքին Գործոց նախարարին այցելեց, և «ցոյց տարով Հասան Պեյլիի եկեղեցոյ ֆանդան մասին «նասած նեռագիրը, ազգու կերպով բողոքեց և տօրե «նութիւն պահանջեց, որոյ վրայ նախարար խոստացաւ «կառավարութեան ծախով վերաճիմնի սալ նոյն եկեղեցին, անիի փառաւոր և շնոյ կերպով, իր արի տեղւոյն վրայ իսկ, վրկելու համար Ազգ. արժանապատ «ուութիւնը, և պատճոյ ենթարկել այս արարին նեղի «նակները :

«Հուսկ յետոյ այցելեց Գասական պաշտօնատներ, «ուր եկարօրէն տեսակցեցաւ Գասական Գործոց Բարձր «Նախարարին հետ, մասնաւորաբար Պօլօլասինի հայ

«աղջկան առեւանգման եւ բռնի իմպւանցման ինդրոյ  
 «վայ, եւ դիտել տալով գործուած ապօրինութիւնները եւ  
 «կեղրոնի նրանանգին դեմ եղած անհնազանդութիւնը,  
 «պահանջեց որ եղած գործողութիւնը խափանուի: Վսեմ.  
 «Նախարարը խոստացաւ անմիջապէս հեռագրով նրա-  
 «հանց տալ տեղական իշխանութեանց, որպէս զի աղջի-  
 «կը յանձնուի նախ Առաջնորդարանի հսկողութեան, եւ  
 «ապա, կատարուած գործողութիւնն չեղեալ նկատուելով՝  
 «ի նորոյ աղջկան մասին ձեռնառկութիւնը գործողու-  
 «թեան, Գարահիսարի մէն լ ի ս ր է ի ն առ-  
 «ջեւ:



Բ . Ա Ր Ա Ր

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(Տեսարանը կը ներկայացնէ Ղալաբիոյ տորհրդա-  
 բանի սրահը.- Պատերէն կախուած են Այվազովսկիի եր-  
 կու նկարները\*) .- Մկրտիչ Սանասարեանցիի եւ Յովսէփ  
 Եզմիրեանցիի կենդանագրերը.- Մեջտեղը երկայն սեղան  
 մը, որու բոլորէիք շարուած են արտուներ, գլխու կողմը  
 քիկնաքոռ մը, նախագահին համար. անդին ուրիշ սե-  
 դան մը, Գիւանիին համար: Սնունկ մը բացուած՝ ուրիշ  
 խառնիխառն բուրբեր եւ ծրարներ դուրս կը խուժեն՝  
 աւելածուի կողովի մը պէս: Գեթիւնը՝ Աղաւնունի Պատ-  
 րիարքին օրէն մնացած կապիտէս մը, որ տեղ տեղ այնքան  
 մաշուած է որ տակէն տախտակամաձը կ'երեւայ . . .

Դուրսը, նրբանցիին մեջ բարապաններ կ'երթեւեկեն:  
 Անդամներ, վեղարաւոր կամ աշխարհական, հետզհետե-  
 տե կուգան.- կրօնականներ երկայն, կարճ, կլորիկ փո-  
 բով, կարմիր այտերով. աշխարհականներ՝ ջղուտ, ոսկ-  
 բուտ, աւշային խառնուածքով. մեկիկ մեկիկ կամ խումբ  
 խումբ կուգան, եւ նախագահին աջը առնելով՝ կը նրս-  
 սին իրենց տեղերը:

(\*) Ամէն բան իրաւունք կուտան հաւասարու քէ այս նկարները  
 պատանմամբ չէ որ հոն զետեղուած են, քանի որ աշխարհական  
 կը խորհրդանշեն հայկական կեանքը. — Առաջինը Քանիւնոյի հոսն է,  
 սկզբով հայ ժողովրդեան, եւ երկրորդը փոքրիկի բռնուած հաւ մը՝  
 նկարմելու մօտ, որ կը խորհրդանշէ իր վարձուած լիկը:



10095-57

Ներք ահօս խուսբեր կազմած են. ուսմք կը խօսակցին մանիփարուալի հրապարակին վրայ, երկու տեսեր ծուխի մը մասին բանակուռի բռնուած են, ուրիշ երկուք ալ ամուսնական գայրակիւրքին մը կը պատմեն եւ կը խորհին քե ի՛նչպէս կարելի է մասիկ հանել այդ գործէն. երկու երեսփոխաններ եւս Մեպուսանի մեջ կիսաս ձգուած վիճարանութիւն մը կը շարունակեն ազովկայից կերպով. ուրիշ անդամ մ'ալ երագային բուլուքեան մեջ սիկառ կը ծխէ, անկիւն մը առանձնացած ։)

**ՆԱԽԱԳԱՀ.** - Տեարք ժողովականք, սրոշեալ ժամը եկաւ, բայց աակաւին մեծամասնութիւն չունինք ։

**ԱՏԵՆԱՊԵՏԸ** (Գիւանին) - Եթէ պատրաստ աստեագրութիւն կայ, թող կարգացուի ։

(Գիւանին կողմէ կը կարգացուի վեց ամիս առաջուան նիստի մը ասեմագրութիւնը։ Անդամներ կը շարունակեն իրենց խօսուքները. ծուխի մասին վիճող տեսերէն աւելի բորբոսած են. — անհամաձայնութեան մը հանդեպ՝ հաւանականաբար, մի քանիներ կը մտախն, ուրիշներ աւելի կը սուզուին իրենց նիւնին մեջ՝ սիկառի ծուխին ոլորներուն մեջ սուզուած, ընթերցումը կ'աւարտի)։

**ԱՏԵՆԱՊԵՏԸ.** - Գիտողութիւնն ունեցողը թո՛ղ յայտնէ ։

**ՄԻ ՔԱՆԻ ԱՆՉԱՄՆԵՐ.** - (Կարծելով որ անցեալ շաբուան նիստինն է) Մենք նախորդ նիստին բացակայ էինք. ներկաները թող յայտնեն իրենց հաւանութիւնը ։

**ԱՄԷՆՔԸ.** - Կ'ընդունինք, կ'ընդունինք ։

(Ասեմագրութիւնը կը վաւերացուի) ։

**ԱՏԵՆԱՊԵՏԸ.** - Օրակարգի անցինք ։ Նախ պիտի կարգացուին Բաղէչէն, Մուշէն, Խնուսէն, Վանէն ։

Կինձէն, Պուրանդէն, Շատախէն հասած գրութիւններ, անդի ունեշած հարստահարութեանց եւ սպաննութեանց մասին ։

**ՁԱՅՆ ՄԸ.** - Հարկ չկայ կարգալ, աստեագրութեան էֆէնտի, ժամավաճառութիւն է կարգալ այդ երկար գրութիւնները, ե յետոյ գաւառի հին յանկերգին կըրկնութիւնն ըլլալու են ։ Ա՛լ ձանձրացանք մտիկ ընելէ ։

**ՈՒՐԻՇ ՄԸ.** - Աղբար, մենք ի՛նչ կրնանք ընել որ մեզի կը դիմեն. կառավարութիւն չենք, գորք, թնդանութ չունինք որ ոճրագործները պատժենք ։

**ՊԷՅ . . . ՁՈՒ ՄԸ.** - Մօն չէս, ի՛նչ բնկ է. ես . . . չէ մենք . . . այսինքն Ազգ. վարչութիւնը, պէտք է . . . այս պէտք է պահանջենք որ կառավարութիւնը բռնել տալով այդ աւաղակները՝ Պոլիս բերէ եւ սրտով, անգական սրաչաօնեաները պատասխանատուութեան ենթարկելով՝ պաշտօնանկ ընէ ։

**ԲԺԻՇԿ ԱՆՉԱՄ ՄԸ.** - Կ'ատաջարկեմ որ խնդրենք կառավարութեան, որպէսզի չբջուս զօրարանակներ (colons volantes) զրկէ գաւառները, խաղաղեցնելու համար աւաղակարարոյ ցեղերը ։

**ՁԱՅՆԵՐ.** - Համամբա ենք, կը ձայնակցինք ։

**ՆԱԽԱԳԱՀ.** - Տեարք ժողովականք, սխալ ձամբու կը հետեւինք. ձեռքերնիս փաստ չունինք եւ երբ այսպիսի գրութիւններու վրայ հիմնուելով՝ խնդրք յարուցանենք՝ մեզի չպիտի բռն. մեր գաւառացիք լայկան եւ չափազանցող են, ե պէտք չէ տարուիլ անոնց այս իրարանցումներէն ։ Նախ պէտք է հարցնենք թէ այդ սպաննութիւնները, կողոպուտները, ելն. ե՛րբ, ո՛ւր, ի՛նչ ձեւով, զիշե՛րը թէ ցերեկը անդի ունեցած են, վկայներ կա՞ն այս մասին ։ Ի՛նչ հիման վրայ կրնանք բողոքել, երբ վկայ չունինք ։

**ՉԱՅՆ ՄԸ .** - Այո՛, այո՛, իրաւունք ունիք, Սրբա-  
դան, պէտք է այս հարցումները դրաւոր կերպով ուղ-  
ղել, և մընչեւ որ ասոնց մասին լիակատար տեղեկու-  
թիւն մը չաւանուի, չենք կրնար նկատի աւնել զանոնք :

**ՆԱԽԱԳԱՀ .** - Ասկէ զատ ինչորին վերջնական լուծ-  
ման համար ես պէտք կը տեսնեմ չըջարեալեան գիր  
մը ուղղել մեր բոլոր գաւառացի ազգայիններուն, պատ-  
ուիրելով որ զգո՛յ՛ն և խո՛նե՛մ բլլան, հաշտ ապրին  
դրացի ցեղերուն հետ, և առիթ չտան զանոնք զրգու-  
լու . արդէն, ևս յանցանքը Հայերուն կը գտնեմ, որ  
մեծ անխոնհմութիւն կը գործեն այսպէս յախուան կեր-  
պով բողոքելով, որոնք պարզապէս ուրիշ բանի չեն  
ծառայեր, բայց եթէ ա՛յ աւելի զրգուել քիւրսերը և  
թուրքերը, և տեղի կուտան ա՛յ աւելի ծանր դէպքե-  
րու . ասիկա խիստ պարզ է, երբ քիւրս մը ոչխար մը  
զոզնայ, կամ հայ մը վիրաւորէ թեթեւապէս, ի՛նչ  
հարկ կայ իրար անցնելու, հեռագիրներ, բողոքներ  
տեղացնելու, ինչ որ աւելի սուղի կը նստի մեր վրայ...

**ՄՕՐՈՒԵՂ, ՏԷՐՏԷՐ ՄԸ .** - (Չկրնալով) այլեւս ինք-  
զինքը բռնել) Բայց, Սրբազան, երբ այդ տեսակ չըջա-  
րեալեան մը դրկենք, զմեզ ամբաստանած պիտի քլ-  
լանք, և իրաւունք պիտի տանք կառավարութեան  
մեզի խռովարար նկատելու : Յետոյ, ինչո՞ւ փաստ չկայ  
կ'ըսուի, նախ նամակները կարդանք անգամ մը, որ-  
պէսզի հասկնանք :

**ԱՏԵՆԱՊԻՐԸ .** - (Կարդալով) «Խոյնց Մէնձեար  
մարթինի գնդակով մը սպաննեց Սէրգոն : Քէօր Հասանը  
և իր արբանակները Աւանց գիւղի տաւարը յափշտա-  
կեցին, և երբ գիւղացիները բողոքեցին, Հասան սպան-  
նեց անոնցմէ Գեւան և վիրաւորեց ուրիշ երկու հոգի...»

**ՆԱԽԱԳԱՀԸ .** - (Ընդմիջելով) Կը տեսնե՛ք թէ ինչ-  
պէս կը հատաւառւին ըսածներս :

**ԱՏԵՆԱՊԻՐԸ .** - (Շարունակելով) «Աշիրէթապեա  
Հիւսէյնի որդի Միր Գէլոն անցեալ որ գիւղին ազբիւ-  
բին մօտ ջուր լեշնելու գացող կիներէն Չինարի պա-  
տիւը բանտարեց, ապա, անոր մազերը, ախանջներուն  
և քիթին ծայրը կտրելով՝ արձակեց . . .

**ՉԱՅՆ ՄԸ .** - 'Անորոշ խօսքեր են ասոնք, մեզի  
փաստ պէտք է, չենք կրնար բաւական նկատել :

**ՈՒՐԻՇ ՄԸ .** - Այո՛, պէտք է չեշտաակուի թէ ո՞ր  
օրը, ժամը զիշերուան թէ ցերեկուան քանիի՞ն գործուած  
են ասոնք, որպէսզի նկատագութեան ասնենք :

(Վիճաբանութիւններ կը շարունակուին այս «բօն»ին  
վրայ . ի վերջոյ կ'որոշուի դիմել համալսական դա-  
մանի (remède universel) եղանակին .-բարբիւր մը գրել  
Բ . Գրան :

(Չեւ կ'աւանուի Շապին Գարահիսարի հովուու-  
րեան խնդիրը, Ասեմադպիրը կը կարգայ զանազան  
գուրբիւններ, որոնցմով նկարագուրելով տեղւոյն Ազգ-  
գործոց շփոք եւ սակնուվրայ վիճակը, տօրեկութիւն կը  
խնդրուի . ուրիշ գրեով բողոքներ կը բարձուին Առաջ-  
նորդական Փոխանորդին դեմ, և անոր կը վերագուրին  
գործոց այս ժխտը վիճակը . Փոխանորդը ինքն ալ հե-  
ռագրով մը հրաժարական կը մատուցանէ :)

**ԱՏԵՆԱՊԵՏ .** - Ի՞նչ միջոց կ'առաջարկէք այս վի-  
ճակին դարման ասնելու համար :

**ԿԱՐՃԱՀԱՍՍԿ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՄԸ .** - Եֆէնտիմ, աս  
ասանկ չբլլաք, ասոր վերջը ո՛ւր պիտի երթայ, որ մը  
հոս, որ մը հոն, աս մարդիկը ամէն տեղ խռովութիւն  
և բմբոստութիւն կը սերմանեն կոր . հեռագրենք Ա-  
ռաջնորդին թէ՛ այս վիճակին պատասխանատուները և  
պարագլուխները մեզի տեղեկագրէ, որպէսզի մենք ալ  
ձերբակալել տանք և անոնց մասին օրէնքը գործա-  
դրենք :

ՊԷՅ . . . ՉՈՒՆ . . . Այս' . . . ո՛չ . . . ևս . . . մինք . . . դուք . . . այսինքն Ազգ . . . Վարչութիւնը պէտք է . . . պէտք է ընդունի փոխանորդին հրաժարականը և նոր անդադան մը դրկուի , որպէսզի վերջ մը զնէ այս երկպառակութեանց :

ԱՄԷՆՔԸ . - Համամիտ ենք , համամիտ ենք :

ԿՐԹԱԿԱՆ ՄԸ . - Բայց ո՞վ դրկելու է , արամադրելի եկեղեցական չունինք :

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՄԸ . - Այս' , ինչդիրը հոս է . ոչ ոք կ'ուզէ գաւառները երթալ , ամէնքն ալ մէկ մէկ ջնջ թաղի քարոզչութիւնը սասած , ախտիկ ըրեր ևս և չեն ուզեր տեղերնուն շարժիլ :

(Եկեղեցականի այս անձկութեան միջոցին , Ասեմադպիրը «Ելբեգալ»ի բացազանչութիւն մը կ'արձակէ : Օրակարգի բուրքերը խառնած միջոցին աչքին զարկեր և Կարիւն Վարդ . Ելլիսիբեմեան ստուգութեամբ նամակ մը , որով յիշեալ եկեղեցականը յայնչելով քէ անպաշտօն վիճակի մեջ Պօլիս կը գտնուի , գաւառական պաշտօն մը կը խնդրէ :

ԱՄԷՆՔԸ . - Պուսիօ' , տեսա՞ք մի եկեղեցականը , սասանկ ըլլալու է , կը հորհուրենք , անմիջապէս ընտրենք և դրկենք :

ՉԱՅՆ ՄԸ . - Լանջախաչ մըն ալ սանք :

ՈՒՐԻՇ ՄԸ . - Եպիսկոպոսական ընծայական մըն ալ :

ԿՐԹԱԿԱՆ ՄԸ . - Վանահայրական իշխանութիւն մ'ալ իզմէ :

ՈՒՐԻՇ ՄԸ . - Չաթալ-թաղ և դաւաղան մ'ալ ինէ :

ՉԱՅՆ ՄԸ . - (Վարսան) Բայց , կը ճանչնա՞ք զինքը , կարո՞ղ է :

ՄԷԿ ՔԱՆԻ ՀՈԳԻ . - Ճանչնալու պէտք չկայ , արդէն անունէն ալ կ'երեւի թէ կարող մէկը ըլլալու է :

ԱՏԵՆԱՊԵՏԸ . - Ուրեմն հիմա իսկ վաւերացնենք , և հեռադրենք Շապին Գարահիսար թէ՛ փոխանորդին հրաժարականը ընդունուած և Տ . Կարիւն վարդապետ անդադան նշանակուած է : (Գիւանին դառնալով) Անմիջապէս հեռագիրը պատրաստեցէք և դրկեցէք :

(Հեռագիրը կը պատրաստուի , կը կնքուի , և բարապանի մը կը տուի հեռագրասուն սանելու համար) :

ՄԷԿ ՔԱՆԻ ՀՈԳԻ . - Իրեն ալ զրենք որ պատրաստուի գտնուի մէկ քանի օրէն ուղեւորելու իր նոր պաշտօնատեղին : Հասցէն ո՞ւր է :

(Տասախոս ևս հարցախնդի նալուածքներ . - Լուսիբիւն . - Ասեմը իրարու երես կը նային : Պզտիկ գրագիր մը ծռած՝ Գիւանադպիրին ականջին բաներ մը կը փափսայ , այս վերջինը Ասեմապետին կը փութալ հաղորդել լսածը) :

ԱՏԵՆԱՊԵՏԸ . - Բայց ստաջուրնէ ինչո՞ւ չյայտնեցիք մնած ըլլալը . նամակին թուականը նայինք (կը նայի) ո՛ , ինք ամսուան նամակ է եղեր : (Զարմանքի շարժումներ) Մարդ մը դրկենք անմիջապէս , բարապետին ետեւէն վազելու և հեռագիրը դարնել չսալու համար . . . (Ընդհուպ բարապետ մը կը դրկուի առաջինին ետեւէն :

ՉԱՅՆԵՐ . - Անանկ է նէ յաջորդ նիստին օրակարգը կ'անցնենք :

ԱՏԵՆԱՊԵՏԸ . - (Ըստ բաղրի բլրերու սրցակէն հեռագիր մը կը հաճէ , և կ'սկսի կարգալ) «Հինգշաբթի ուստական «Թօթօլ» շոգենաւով Պաթուսէն ճամբայ ելնելով՝ այսօր Սինսոլ հասանք , բայց քոչերայի պատճառան քարանթինայի կ'սպասենք կոր : Ընդհուպ Չերարտօնութեան կ'սպասենք ճամբայ ելնելու համար :» Ստորագրութիւն՝ Գիտակ Եպիսկոպոս :

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԳՍՄ ՄԸ . - Ահաւասիկ պարտաճաւ

նաչ եկեղեցական մը : Երբ մէկ կողմէ կը գանդատինք թէ եկեղեցականներ առանց մեզմէ արտօնութեան հասն հոն կ'երթան , ուրախալի է որ անոնին կայ կղերի մեծամասնութիւնը ներկայացնող գաս մը , որ զիտակ է սա օրէնքին թէ եկեղեցական մը ինքզինքին չի պատկանիր և իւրաքանչիւր քայլի համար արտօնութիւն պէտք է առնէ , այսպէս կը պահանջէ եկեղեցական օրէնքը : Կ'առաջարկեմ նախ՝ արտօնել Գիսակ Արքազանը վերադառնալու իր պաշտօնատեղին , և միանգամայն այսուհետեւ առանց արտօնութեան ճամբորդող կղերականները փրկնազրկութիւն և ուրիշ ծանր պարիմներու ենթարկել :

**ԲԺԻՇԿ ԱՆՊԱՄ ՄԸ .** - Իբրև բժիշկ շատ գոհ եմ քօլէրայի վերերեւումէն , որով կը հաստատուի համբուս և նախատեսութիւնս : Ես էի մբայն , Բրօֆ . Պաղկլին հետ՝ որ գիտական հիմերու կրթմամբ՝ առջի համահարակին ատեն սնդեղինք թէ դարձեալ ամառը երևան պիտի ելնէ այդ հիւանդութիւնը , և ահաւասիկ կը հաստատուին մեր տեսութիւնները . . . :

**ԱՏԵՆԱՊԵՏԸ .** - Խնդրէն կը շեղիք կոր :

**ԲԺԻՇԿԸ .** - Կը պահանջեմ որ ատենագրութեան մէջ արձանագրուի այս պարագան :

**ՊՈՒՐԺՈՒՍ ԱՆՊԱՄ ՄԸ** (Որ սարին երկու անգամ միայն բերանը կը բանայ՝ ֆօլեայի անունը արհասանուելէն սահմակած եւ դողդալով) . - Բայց չէ հաստատուած ցարդ թէ քօլէրան ճարակած է դարձեալ , թերթերը բան մը չի գրեցին այս մասին :

**ՈՒՐԻՇ ՄԸ .** - Թերևս առջի քօլէրային համար է :

**ԱՏԵՆԱՊԵՏԸ .** - (Հեռագրին բուականը նայելով)

13 Սեպտեմբեր 1910 . ուրեմն առջի ստորուան համահարակին առթիւ քաշուած է :

**ՉԱՅՆ ՄԸ .** - Հասցա Գիսակ կախկոպո՛ւսը , արդևօք ցարդ Սինօպի մէջ մեր արտօնութեան կ'սպասէ մեկնելու համար :

**ՍՐՅԱՉԱՆԸ .** - Պարտաւոր է սպասել , և եթէ մեկնած է յանցաւոր է , և ըստ նախորդ առաջարկութեանս , պէտք է պատժոյ ենթարկուի :

**ՉԱՅՆ ՄԸ .** - Այո՛ , կախկոպոսութիւնը աւնուի վրայէն :

**ՎԱՐԳԱՊԵՏ ՄԸ .** - Ատիկա անկարելի է : Մինակ կրնանք վանք մը զրկել սպաշխարհելու համար :

**ԱՏԵՆԱՊԵՏ .** - Ուրեմն , նախ հեռագիր մը քաշենք Սինոպ , թէ Գիսակ կախկոպոսը տակաւին հոն կ'սպասէ թէ ոչ : Եթէ ստուգուի թէ հոն է , կ'արտօնենք որ գամայ իր տեղը , իսկ եթէ առանց մեր հրամանին մեկնած է , Ս . Կոնստանդ վանքը կը զրկենք վեց ամիս սպաշխարհելու համար . . . բաւական է վեց ամիս :

**ԱՄԷՆԲԸ .** - Կը բաւէ :

(Ասեւագպիւր կ'սկսի կարգալ գանազան վիճակներէ հասած ընտրեանց վերաբերեալ տեղեկագրեր : Ամեն կողմէ կ'արկնեն քե հարկ չկայ կարգալ , այլ նիւրը միայն յայտարարել կը բաւէ :

**ԱՏԵՆԱՊԵՏ .** - Զանազան վիճակներէ Ընդհանուր , Կրօնական և Քաղաքական Ժողովներու ընտրութիւններ կատարուած և յայտարարուած են մեզ . կ'ընդունին՞ որ հաստատուին :

**ՄԷԿ ԲԱՆԻ ՉԱՅՆԵՐ .** - Եթէ ստորագրուած են , կը վաւերացնենք :

**ՈՒՐԻՇ ՄԸ .** - Ի՞նչ կ'ըսէք եղբայր , միայն ստորագրուած ըլլալը չի բաւեր , այլ պէտք է մանրամասնաբար քննել թէ օրինական բոլոր ձեւակերպութիւնները և պահանջները լրացուած են թէ ոչ :

ԱՄԷՆՔԸ . - Աւելորդ է, կը վաւերացնենք կ'երթայ :

(Ասեմապետը կը յայտնէ քէ բազմաթիւ խնդիրներ կան դեռ սեղանին վրայ, կ'ուզուի՞ կարդալ քէ յետաձգել) :

ՏԵՐՏԵՐ ՄԸ . - (Իրպանէն բուլբ մը հանելով) Սախարդական և խիստ կարեւոր խնդիր մը ունիմ այսօր ներկայացնելիք Պատ . վարչութեանը . կը խնդրեմ որ միւսները յետաձգէք և ասով զբաղիք . խնդիրը սա է . «Ս . Թաղի աւագերէցը յափշտակած է նոյն զիւրը զըստուած ծախերէս մէկը . կը խնդրեմ որ այս մասին հարկ եղած պատիժը տրուի այդ քահանային, և իմ բնաբարբոսած իրաւունքս վերադարձուի ինձ :

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՄԸ . - Բայց այսօր աւելի կենսական խնդիրներ ունինք մեր սեղանին վրայ . զինուորագրութեան, կրթական, երուսաղէմի և այլ բազմաթիւ խնդիրներ, որոնք ամիսներէ ի վեր զիջուած են, և չենք կրնար կոր լուծել զանոնք :

ԿՐԹՆԱԿԱՆՆԵՐԸ (միաբերան) . - Եթէ այս խնդիրը հիմայ իսկ չկարգադրուի, ամէնքնիս այ կը հրաժարինք . այդ երեւոյթը սղատնական հանգամանք մը կ'առնէ կոր, և եթէ անմիջապէս դարմանը չի խորհուի, մեծ անտեղութիւններ պիտի ծագին :

ՏԵՐՏԵՐ ՄԸ (հեռորդէն) . - Սեփականութեան իրաւունք չի յարգուի՞ր . այսի՞նչ անխիտանութիւն է որ կը տիրէ . այսօր ուրիշին, վաղն ալ մեզի կրնան սրատարի :

ՁԱՅՆ ՄԸ . - Ուրեմն Գննիչ Մասնախումբ մը կազմենք եօթը հոգիէ բաղկացեալ, որ պաշտօն ունենայ քննելու թէ՛ խնդրոյ առարկայ ծուխը յիշեալ երկու քահանաներէն որո՞ւ կը պատկանի :

ՎԱՐԳԱՊԵՏ ՄԸ . - Ես կ'առաջարկեմ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցականներէն Համագումար ժողով մը կազմել և քննելով այս խնդիրը՝ միանգամ ընդ միշտ մըջոց մը խորհիլ, որպէսզի ապագային չի կրկնուին նմանօրինակ անտեղութիւններ :

ԱՄԷՆՔԸ . - Այո՛, համաձայն ենք, կ'ընդունինք : (Ամեն կողմէ սրտունջներ կ'սկսին քէ անօրի եւնի . մեկ քանի հոգի կ'առաջարկեն Ասեմը փակել այլեւս) :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Խնդրեմ, յարգելի ժողովականք, Ազգին համար ըրած զոհօրութիւննիս մինչև ծայրը տանինք գոնէ, հինգ վայրկեան եւս հաճեցէք սպասել, խզճի խնդիր մը կայ, այն ալ նայինք :

ՁԱՅՆ ՄԸ . - Այս ի՞նչ է եղբայր, դորձերնիս ձգած, անօթի ծառաւ, Ազգին համար հոգինիս բերաննիս կը բերենք կոր :

(Ասեմադպիրը կը կարդայ սրտանկիկ նամակ մը՝ Զեյրուհե եկած, որով կը յայտնուի քէ անհնարին քրուատուրքին կը սիրէ քաղաքին մեջ եւ շրջակաները . սով մեկ կողմէ, համահարակ հիւսնգութիւնները միւս կողմէ, օրական 40-45 ման կը պատանի, եւ փութով նպաստ, դեղ եւ բժիշկ կը խնդրեն) :

ՁԱՅՆԵՐ . - Նպաստից Յանձնաժողովին յղենք այդ զիւրը :

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ ՄԸ . - Բայց այդ ձեւակերպութիւնը չարաթիւնը կը տեսէ և թերեւս անդիր Զէյթուն փձանայ :

ԵՐԵՍՓ . ԱՆԳԱՄ ՄԸ . - Ինչ ըսել է, էֆէնտիմ, չենք կրնար, Ազգ . Սահմանադրութիւնը ամէնուս պատանը եւ իրաւասութեան սահմանը զձած է, անկէ չեզուամ մը ընել աններելի է :

(Կ'որոշուի զիրը նպաստից Յանձնաժողովոյ ուշադրութեան յանձնել) :



Գուրգը արժուկներ կը յարուցուին, անգամներ կը պատասխան մեկնիլ, բարապան մը նախ՝ նախագահին, ապա ասեմապետին ակամօջին բաներ մը կը փոփոխայ, այս վերջինը իր ընկերներուն ցած ձայնով երկու խօսք կ'ընէ : Հարցական հայուածքներ եւ փոփոխումներ) :

**ԱՏԵՆԱՊԵՏԸ** (բարձրաձայն՝ բարապանին) . - *Ներս կանչէ :*

(Ներս կը մտնեն Փասքիւղի ուսուցիչները եւ անկիւն մը կը շարունակն կարգաւ .)

**Ա . ՈՒՍՈՒՅԻԶԸ** . - *Էֆէնտիններ , կը խնդրենք որ սա՛ մեր խնդիրը միանգամ ընդ միշտ կարգադրէք եւ վերջ մը տաք մեր այս դասն կացութեան , ամիսներէ ի վեր կը դեղերինք այսպէս , առանց արդիւնքի :*

**ԱՏԵՆԱՊԵՏ .** - *Այսօր չենք կրնար զբաղիլ Ձեր խնդրով , որովհետեւ , ինչպէս որ կը տեսնէք ա՛նա , մեծամասնութիւն չունինք :*

**Բ . ՈՒՍՈՒՅԻԶԸ** . - *Բայց , ինչպէ՞ս կ'ըլլայ որ մինչև հիմայ ժողով կ'ընէիք . . . :*

**ԱՏԵՆԱՊԵՏԸ** . - *Խորհրդակցութիւններ կատարուցինք միայն , բայց որոշում չուրինք , ամէն պարագայի մէջ յաջորդ նիստին կը նայինք Ձեր խնդիրը :*

(Ուսուցիչները կէս մը չհաւատարկուն , կէս մ'ալ համբերութիւններն սպառած , բանակոռի մեջ են , անդամները մեկիկ մեկիկ կը կծկեն , վարք՝ սանդուխին վրայ վես դիւրով՝ ազգային փրկիչի դեմքեր առած՝ եւ բարապաններու քեմեմահներուն մեջ կ'անհետանան .)

×

Յաջորդ օրը թերթերուն մէջ կը կարդանք Գիււանէն արուած հետեւեալ քօնթ-ոսանախն :

« Խառն ժողովը զուամարուեցաւ երէկ Ղալաթիոյ

« Խորհրդարանին մէջ , նախագահութեամբ Բարձր . Տեղապահ Ս . Հօր եւ զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով :

« 1 . Ժողովը նկատողութեան առաւ ներքին գաւառներու մէջ տիրող անապահովութեան խնդիրը , եւ « յետ խորհրդակցութեան որոշեց ինչ ինչ տնօրէնութիւններ ընել :

« 2 . Շ . Գարահիտարի հովուութեան համար , ժողովը կրօնականին յանձնեց՝ յարմար եկեղեցական մը նշանակել եւ յայտարարել :

« 3 . Ժողովը ուշադրութեան առաւ հետեւեալ Առաջ-Նորդարաններէ հասած ընտրական տեղեկագիրները եւ « յետ մանրամասն քննութեան , ստուգեց կատարուած « ընտրութեանց օրինաւորութիւնը , եւ հաստատեց գաւանդ՝ որոնք են .

- « Արաբէիլի կրօնական ,
- « Պաղատառի Գաւառ . Ընդհանուր ,
- « Պանարմայի Բաղաշական ,
- « Եւզոնլիոյ կրօն . ու Բաղաք . Ժողովները :

« 4 . Ժողովը յարմար դատեց յտաջիկային հրաւիրել մայրաքաղաքին եկեղեցականաց Համագումար ժողովը , խորհրդակցելու համար կրօնական բնութիւն ունեցող խիստ կարեւոր եւ կենսական մէկ քանի խընդ-բաց կարգադրութեան համար :

« 5 . Ուշադրութեան առաւ Չէյթուհի վիճակը , եւ « որոշեց Նպաստից Յանձնաժողովոյ ուշադրութեան « յանձնել խնդիրը :

« 6 . Ժողովը ասոնցմէ զատ զբաղեցաւ յարարերա-« կան ինչ ինչ խնդրոց տնօրէնութեամբ . »



# Գ. ԱՐԱՐ

## (ՈՒՍՈՒՍՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ)

(Տեսարանը կը ներկայացնէ Ղալաթիոյ կեդրոնական Վարժարանի Տնօրէնութեան սննեակը : Հայկական Ակադեմիայի անդամները, որոնք քեռ Ֆրանսականէն նուազ քանակով, բայց որակով եք ոչ աւելի բարձր, գեթ հաւասարակց են, յոխորս դիւրով բազմած են մշակել քիկնարողներու վրայ՝ պարագային նախնաս դեմքեր շինած, զիսակ իրենց կարեւորութեան եւ բարձրութեան :

Սննեակին բոլորիքը, սանդուխները, նրբանցքը պաշարուած են երկու սեռէ ուսուցիչներով, որոնք առաջին ակնարկով մ'իսկ կը հանչցուին, ոմանք իրենց սրածայր մօրուով, ոմանք անբաժան ակնոցով, կամ փիլիսոփայական մաշած վերակուով . վարժուիներ, սանկ իրենց կես մը ֆեմինիսքի, կես մ'ալ չափազանց ծեփծեփուն եւ անհանդարս երեւոյթով . ամենուն վրայ առհասարակ կայ պատուելիական, սրացուական չեմ գիտեր տեսակ մ'ինչ հով, որ զսննք անմիջապէս կը բնորոշէ, եք կարելի է այսպէս ըսել :

«Բարապետ մը գուրս գալով՝ անուն մը կ'արտասանէ, որոյ վրայ այդ բազմութեան մեջէն մեկը ներս կը մտնէ :»

### Պատկեր Ա.

Ժողովական Սրահը

ԱՏԵՆԱՊԵՏ . - Անունդ ի՞նչ է :

ՎԱՐԺԱՊԵՏԸ . - Պողիկարպոս :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Քանի՞ տարեկան ես :

ՎԱՐԺԱՊԵՏԸ . - Դեռ հազիւ 25 զարուհներ բարձրած եմ . . .

ԱՏԵՆԱՊԵՏԸ . - Ինչո՞վ կ'ըրարդիս :

ՎԱՐԺԱՊԵՏԸ . - Նուստստ, արուստ պաշտօնեայ մըն եմ Ազգ . Դատարարակալութեան վեհաժողովին, անարժան կրթական մշակ, ազատ ջան Ազգ . Լուսաւորութեան . . .

ԱՆԳԱՄ ՄԸ . - Եղբայր, զանի՞ պաշտօն մէկէն կը կրաս սրես :

ԱՏԵՆԱՊԵՏԸ . - Վկայական ունի՞ս, ան լսէ, չո՛ւտ :

ՎԱՐԺԱՊԵՏԸ . - Պատահ առթիւ կ'աննեմ, բայց երկար տարիներու այս փշտա ասպարէզին մէջ տարած . . .

ԱՏԵՆԱՊԵՏԸ (Ընդհատելով) . - Կը բառէ, չեմ, կըրնար լսել զեղի, զանի որ վկայական չունիս . (բարապետին) բարապետ, գուրս տար սա մարդը :

ՎԱՐԺԱՊԵՏԸ . - Բայց, ի սէր Աստուծոյ, խնդրեմ, ես զրկեալ պաշտօնեայ մ'եմ, Հոգաբարձութիւնը սպորէն կերպով . . . (Խօսքը շաւարսած՝ հրձեկելով դուրս կը հանեն : Ներս կը մտնէ վարժուի մը :)

ԱՏԵՆԱՊԵՏ . - Անունդ ի՞նչ է :

ՎԱՐԺՈՒՀԻՆ . - Հրանդուհի :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Քանի՞ տարեկան էք :

ՎԱՐԺՈՒՀԻՆ (բաւական տատանելի ետք) . - 21/ին ե 22/ին մէջաւորը կը գտնուիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Անունդդ ի՞նչ է :

ՎԱՐԺՈՒՀԻՆ (շիկնելով) . - Ո՛չ . . . գիւ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Կառ ու չաղբութիւն ըրէք ուրիմն, այն օրը որ ամուսնանաք, վկայականդ ձեռքէդ կ'առնենք . մարդ մը երկու տէրանց միանգամայն չկրնար ծառայել, կամ միայն երկանդ պիտի պատկանիս, ե կամ ազգային մշակութիւն . . . ըսէք ուրիմն, ի՞նչ կը փախարկիք :

ՎԱՐԺՈՒՀԻՆ . - Չեռազործի մասնադիտութեան վկայական :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Կրնա՞ս հոս անմիջապէս մեր աչքին առջև փորձ մը կատարել :

(Վարժուհին գրպանէն կիսաս մեկ frock մը կը հանէ եւ կ'սկսի շարունակել : Անդամները աչք կ'ընկնէն , եւ ակնարկով կը լախեն զայն :)

ԿԱԼԱՆ ԱՆԴԱՄ ՄԱՐ (քիին օտարացիներէն) . -

Սչերք սիրոյ ատուշան ,

Մասներդ էին զիրգ շուշան . . . :

(բարձրաձայն) կը շնորհակարտիմ , օրհնորդ , ճարտար մասնիկներ եւ գեղեցիկ ձեռքեր ունիք :

ԱՄԷՆՔԸ . - Կը շնորհակարտիմ :

(Ապա , կալան անդամին առաջարկութեան վրայ՝ միաձայնութեամբ կ'որոշուի ձեռագործի մասնագիտութեան վկայական տալ :)

ԱՏԵՆԱՊԵՏ . - Յարգելի ժողովականք , հիմայ ձեռք պիտի առնենք կազմ . կանոնադրի վերաքննութեան խնդրը . (բարապանին) գնա՛ սա դուրսը կեցողներուն բնէ որ այսօր չենք կրնար զբաղել այլևս իրենցմով : (ժողովականներուն դառնալով) Գիտէ՞ք թէ եկող գացող բոլոր Ուս . կործանողները պարտականութիւն համարած են մէյմէկ անգամ բարեփոխութեան կամ վերաքննութեան ենթարկել զայն . սպանովարար , մենք չէ որ վար պիտի մնայինք անոնցմէ : ահա թէ ի՞նչ նկատումով անցեալ նիստին որոշած եւ ձեռնարկած էինք այդ գործին : Այժմ պիտի շարունակենք մնացած տեղէն , այսինքն՝ Ուս . կործանող իրաւասութեան սահմաններու , յարաբերութեանց եւ երկուսն ստուգչաց կենցաղի պայմաններու ճշգրտում : Հրամայե՞ք , ձայն առնողը թող խօսի :

ԱՆԴԱՄ ՄԱՐ . - Ասիկա մեզի համար կենաց եւ մահու խնդիր է , պէտք է միանգամ ընդ միշտ ճշգրտին եւ գծուին մեր իրաւասութեան սահմանները , որպէսզի , այսուհետեւ ալ թաղական կործանողներ , Հողաբարձութիւններ , Գաւառական Վարչութիւններ եւ Ուսումնական կործանողներ , ճանջան մեր հեղինակութիւնը , եւ ինքնագլուխ կամ մեր հրահանգաց հակառակ չհամարձակին գործել :

ՈՒՐԻՇ ՄԱՐ . - Այս ալ բաւական չէ , պէտք է պատժական տրամադրութիւններ ալ աւելցնել անոնց մասին , որոնք անաստեն Պատկ . ժողովոյս հրահանգներուն , եւ որոշումներուն : Պէտք է , զոր օրինակ՝ պատասխանատու բռնենք զիրենք կեզր . վարչութեան առջև :

ՈՒՐԻՇ ՄԱՐ . - Ամբաստանե՛նք :

ՈՒՐԻՇ ՄԱՐ . - Դատապարտե՛նք :

ՈՒՐԻՇ ՄԱՐ . - Լուծե՛նք :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Լաւ ուրեմն (դիւանադպիրին) գրէ . յօդուած 15րդ . «Ըլլայ մայրաքաղաքիս թէ դաւաններու շէջ , ո՛ր եւ է անձ կամ Ազգ . Մարմին , որ ո եւ է կերպով յանդգնի ոտնձգութիւն ընել Պատ . ժողովոյս իրաւասութեան դէմ , կամ անոր որոշմանց եւ հրահանգաց դէմ շարժի , կամ թեղադիր գտնուի , եւ կամ ո եւ է կերպով խոչընդոտ յարուցանէ , կամ պատճառ ըլլայ բանգործադրելի մնալուն , Յէն 6 ամիս . . . հա , չէ սխալեցայ . . . լեզուս վարժուած է տէ . . .

ՄԱՆԿԱՎԱՐԺ ԱՆԴԱՄ ՄԱՐ . - Եղբայր , ի՞նչ է այս , Պատժական Օրինադիրք կը շինենք կոր :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Ի՞նչ գիտցաք . պզտի՞կ բան է ինձի պէս օրէնսդէտ մէկը ունենալ Ձեզի իբր Ատենապետ : (Դիւանադպիրին) Շարունակէ . շէթէ Ազգ . Մարմին մըն է այդ արարքին յանդգնողը , անմիջապէս առաջի Ազգ

«Կեղը . Պատ . վարչութեան բողոք կը բարձուի և լու-  
 շծուծը կը պահանջուի , իսկ եթէ սոսկական անհատ  
 «մին է , 24 ժամէն մինչև չարաթ մը բանտարկութեան  
 չկը դատապարտուի . . . » քիչ է նէ բարձրագիննք :

**ԱՆԳՍՄ ՄԸ .** - Ո՛չ , լաւ է , բայց խնդիր է թէ  
 ո՛ւր անդ պիտի բանտարկենք : Կեղրոնական Մատուկի  
 պիւտձէն չի ներեր որ Կեղրոնական բանտ մը կառու-  
 ցանենք :

**ՈՒՐԻՇ ՄԸ .** - Էֆէնտիմ , ազգասիրաբար պէտք է  
 որ անդամներէն մին այդ գործը վրան առնէ :

**ԱՏԵՆԱՊԵՏԸ .** - Ես յանձն կ'առնեմ իմանի մէջի իմ  
 սենեակս արամադրելի ընել այդ նպատակաւ , արդէն  
 յաճախորդ ալ շատ չունիմ որ . . . : Գանք հիմաջ  
 ուսուցիչներու կենցաղավարութեան խնդրոյն , այս ալ  
 ալ հրատապ հարց մ'է . այսօր , ցաւալի է ըսել թէ մեր  
 ուսուցիչներէն շատերը բարոյապէս այլասեռած են ,  
 թունաւորուելով օտարամուտ վնասակար դաղախարներէ  
 և փարսախներով հեռացած պապկնական առաքինու-  
 թիւներէն՝ կրօնասիրութիւն , ազգասիրութիւն , խո-  
 նարհութիւն , հնազանդութիւն ելն : Այսօր , ընդհակա-  
 ոակը կը տեսնենք անհաւատ , ազգութաց , բմբոտ ու-  
 սուցիչներ , որոնք դեռտախ ուսանողութիւնը պիտի  
 պատուաստեն իրենց վնասակար դաղախարներով . այս  
 հոսանքին դէմ թումը մը կանգնելու է : Եւ կ'առաջար-  
 կեմ մանրամասն հրահանգ մը պատրաստել , ուսուցչաց  
 կենցաղի , հազուատի կապուտի , ուշտեսի , վերջապէս  
 մինչև ամենարնտանի սովորոյթները և պայմանները  
 սահմանող , և միանգամայն խիտ պնտիմներ սնորհնել  
 հրահանգէն ամենախորք չեղում մ'ընողներուն մասին :

**ՄԱՆԿԱՎԱՐԻ ԱՆԴԱՄԱՐ .** - Բացարձակապէս հակա-  
 կարծիք եմ ձեզի : Մեծ մանկավարժներ և հոգեբաններ

քարոզած են որ դաստիարակութիւնը ազատ պէտք է  
 ըլլայ , զերծ կապանքներէ , նախապաշարումէ և ար-  
 դիւքներէ : Մասնաւորաբար ժան ժող Ռուսո իր Էմիլին  
 մէջ ըսած է որ ինչպէս ամէն անհատ , նոյնպէս և աշա-  
 կերաբ և ուսուցիչը պէտք չէ կաշկանդուումներու և  
 դուրսէն արդեցութեանց ենթարկուած ըլլան : Գալով  
 անունդի ինդրին , մեծ բնաստներ հաստատած են որ  
 մտաւորապէս արդիւնաւոր մշակ մ'ըլլալու համար լաւ  
 անունդ պէտք է առնել , և լաւ ապրիլ . Առողջ միտք՝  
 առողջ մարմնոյ մէջ , այս խօսքը չի պիտի հիմնայ , որ-  
 քան ստեն որ սակաւին տարակոյս մնայ ասոր մասին :  
 Պաւլյոս Սապարէն իր Physiologie du Goût գրքին մէջ  
 ըսած է որ , Ազգերու ճակատագիրը իրենց անանկու-  
 եղանակէն կախեալ է , եւս ստաւել անհատներու համար  
 ճշմարիտ է ասիկա : Քանի որ մեծամասնութիւնը հրա-  
 հանգի պատրաստութեան կողմնակից է , կ'առաջարկեմ  
 ուրեմն որ անունդի գլխաւն մէջ ուսուցիչներու իբր  
 յարմար կերակուր նշանակուին պեֆտէք , օմիէթ , ֆիլէ ,  
 սոզսիֆ , բուլէ , ինչպէս նաև քիչ , բայց պատուական  
 դիւնի , մասնաւորաբար Մատէրա , Պօսսօ , Մալակա ,  
 պայմանաւ որ հին ըլլան :

**ՁԱՅՆ ՄԸ .** - Աւելի յարմար է բանջարեղէն և կա-  
 նանջեղէն անունդները , զորօրինակ դբում , կաղամբ ,  
 պրսա , չողգամ . . .

**ԲԺԻՇԿ ԱՆԴԱՄ ՄԸ (ուժգօրէն) .** - Կը բողոքեմ՝  
 չողգամէն դէմ . չողգամը glucose կը պարունակէ , որը  
 շաքարախառ ունեցողներուն վնասակար է , և նկատելով  
 որ այսօր բժշկական աշխարհին առջև հաստատուած  
 իրողութիւն մին է որ ընդհանրապէս ամուրիներն սուկի  
 ենթակայ են այդ հիւանդութեան , և նկատելով որ մեր  
 ուսուցիչներն ալ մեծաւ մասամբ ամուրի են , կ'առա-

Ջարկեմ ցանկէն ջնջել շողքամբ, և անոր տեղ աւելցնել բաթաթէսը:

(Բուռն վիճաբանութիւն մը կ'սկսի այս երկու բան- ջարեղեկներուն շուրջ. բժիշկը ջերմասկես կը պատշապ- նէ իր տեսակէսը, մինչդեռ շողքամի կուսակիցները կո- կորդնին պատուելու աւսիման բորբոսած են:

ԱՏԵՆԱՊԵՏ. - Քուէարկութեան կը դնեմ ուրինն, անոնք որ բաթաթէսի կողմնակից են, թող մտաւերնրն վեր առնեն:

ԱՆԳԱՄ ՄԸ. - Ատենասպեա էֆէնտի, խնդիրը ծան- րակշիւ է, այսպիսի խնդրեր մը անուանական քուէի չկրնար դրուիլ, գաղանթ քուէով պէտք է որոշենք: Ես, իմ մասիս. չեմ ուզեր զէջ մարդ բլլալ մեր անկու- կի նպարտախճատին հետ, որ ապառիկ վարկ բացած է ինձ . . .

(Ի վերջոյ գազնի փուտարկութիւն կատարուելով՝ ջախջախիչ մեծամտամուտքեամբ կ'որոշուի պանել շող- գամբ, և մերժել բարարեար:

ԲԺԻՇԿԸ. - Թող արձանագրուի որ ես բողոքելով կը մեկնեմ կոր (դուրս կ'ելնե):

ԱՏԵՆԱՊԵՏԸ (դիւանասպետին). - Գրէ. «Յօդ. 17. Ազգ. Կեդր. Վարչ. Սուտն. Խորհուրդէն վկայեալ ու- սուցիչները և սուսուցչութիւնները պէտք է աւան մշտն ճեղքուեալ բանջարեղէնները. գգուժ, կաղամբ, պրատ, շողքամ, խնչպէս նաև Խորհրդէն արտօնեալ յարմար տեսնուած այլ մտանդներ: Արգելուած է այս ցանկէն դուրս ուրիշ սնունդ առնել, անաստաղներու մասին խիստ անօրէնութիւններ ի գործ պիտի դրուին: Գանք հիմա դրսերուտցիթի և հագուստի խնդրին: Նախ ես բա- ցարձակասպէս կ'արգիլեմ սեւ կամ սպիտակ փողկապ ր, խնչպէս նաև սրածայր մօրուքը և երկար մա-

զերը: Անցեալ օր Գ. դիւղի վարժարանը այցելած ատենս այսպէս հարուած ուսուցիչ մը դիմալս ելաւ՝ և անանկ մը աչքերուս մէջ նայեցաւ որ վախէս կեցած տեղը դատուած մտացի . . .

ԱՆԳԱՄ ՄԸ. - Ինչպէ՛ս չիմտանք հին օրերու պատուելիները, որոնք շարվար կը հարնէի՛ն, բայց այն- չափ խմաստութիւն կը ծորեր իրենց շրթներէն:

ՄԱՆԿԱՎԱՐԺԸ. - Բէսթալօցցի, Զուլցերիացի մեծ մանկավարժը, կ'ըսէ թէ ուսուցիչներուն արտաքինը, հագուստը, էջն. մեծ ազդեցութիւն ի գործ կը դնէ աշակերաններուն վրայ և թէ հետեւաբար . . .

ԱՄԷՆՔԸ. - Հոս Զուլցերիա չէ, մենք Ասիացի ենք, և պէտք չունինք մեր միջավայրին անյարմար գաղափարներ և սովորոյթներ որդեգրել կամ իւրացնել:

ԿԱԼԱՆ ԱՆԳԱՄԸ. - Գանք հիմայ ուսուցչութիւն- րուն: That is the Question: Կիները աշխարհի չքնա- դազդին արարածներն են, և կ'արժէ որ դբաղինք ա- նոնցմով:

ԱՏԵՆԱՊԵՏ. - Խնդրէն կը շեղէք կոր, ի կարգ կը հրաւիրեմ:

ԿԱԼԱՆԸ. - Ներեցէք, կիները ըսելով՝ վարժուհի- ներուն ակնարկել կ'ուզէի . . . ես համակարծիք չեմ որ անոնց հագուստի ձևեր, կամ աւելի վատը համազ- դեստ կրելու պարտապարտ. թուխին ուրիշ գոյն, խար- տեալին ալ տարբեր կարուածք մը կամ պիտակ մը կը վայելէ, և կ'ընել անոնց համազդեստ կրել բանապատկը պարզասպէս ոճբարձութիւն է. թողունք որ ուզած ե- զանակաւ հագուէն, նոյնիսկ այլանդակ նորոյթներու ճեղքէն, արդէն դեղեցիկ կ'ընկան մը ամէն բան կը վա- յելէ:

ՉԱՅՆ ՄԸ. - Եթէ կ'ընեն ժիւր-ֆիւլօր ալ հարնին, դարձեալ պիտի թոյլատրենք:

**ԿԱԼԱՆԸ .** - Էֆէնտիմ, չենք կրնար, խղճի զէմ է. ազատ ձգենք զիրենք այս մասին: Կնոջ մը ճաշակը միշտ աւելի չորհայի է քան այր մարդոցը, նոյնիսկ Պատկ. Խորհրդոյս անդամներէն: Միայն թէ կ'ուզէք վիտայական տանը անոնց միայն, որոնք հայ ուսուցչուհիութեան վայելչագէտի և գեղեցկագէտի համբար բարձր կը բռնեն:

**ԱՆԳՍՄ ՄԸ .** - Կապոյտ աչքեր և շէկ մազեր ունենալը sine qua non պայման ընդունինք . . .

**ԿԱԼԱՆԸ .** - Ատենապետ Էֆէնտի, յանուն թխազոյն աղջիկներու և կիներու ուժգնորէն և բոլոր սցօսվք կը բողբքեմ և կը պահանջեմ որ խօսքը ևս աննէ:

(Աղձուկը կը շատայ, բուխի եւ խարտեաւի կուսակիցներ բուռն կերպով պայխար կը մղեն, Ասենապետը կը յայտարարէ որ եթէ աղձուկը շարունակուի պիտի ստիպուի Ասենապետի վակել: Երկուստեք նախասիններ կը փոխանակուին:)

**ՄԷՆԸ .** - Դուն ճաշակ չունիս, կեցցե՛ն խարտեաչները:  
**ՌԻՐԻՇ ՄԸ .** - Դուն ի՛նչ կը հասկնաս, կեցցե՛ն թուխերը:

**ՌԻՐԻՇ ՄԸ .** - Ճաշակները անվիճելի են:  
(Ընդհանուր խառնաշփոթութիւն կը տեսնուի, այլեւս անկարելի է իրարու խօսք հասկնալ:)

**ԱՏԵՆԱՊԵՏ .** - Էֆէնտիներ, նիստը վակուած է, յաջորդ անգամուան կը թողում վիճարանութեանց շարունակութիւնը: (Անդամներ կ'ստիպուին բոլոր իրենց արտուներ և դուրս կ'ելնեն, բայց այնչափ խանդավառուած են իւրաքանչիւր իր պաշտպանած քեզէն, որ դուրսը, դեռ կը շարունակեն իրենց վիճարանութիւնները նոյն քափով:)

### Գ. ԱՐԱՐ

## Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Խ Ո Ր Շ Ո Ւ Ր Դ

(Տեսարանը կը ներկայացնէ Ղալաթիոյ Օնախին այն մասը, ուր Ամենափրկիչի խնամակալները շարքէ շարք կը ժողովուին մովին գիւր բարձրացնելու, եւ ժամկոչին, լուսարարին եւ ուսուցիչներուն ամսականները գեղջելու համար: Հո՛ն են Ազգին ամենէն մեծ երմսագէտները: Ահա՛ Հայոց Մ. Լուսար, ձավիս պէյը, Մ. Լրուուա Պոլիտոն: Եթէ չվախնայինք համեսութիւններ վիրաւորելէ, դեռ կարելի էր բաղդատութեան եզրերն երկարել:

Դուրսը, ժողովասեղանյն բոլորեթիբը, ամեն կարգի հայրալքիչներ, պարսապահանջներ—քրթավաճառ, սպագրիչ, կառապան, աւելածու — քրուած դեմքերով եւ անհամբեր շարժումներով կ'սպասեն, քաջ գիտնալով քեզ կարգաց ընդունելութիւն մը չէ որ պիտի գտնեն:

Ժամը 9նէ, Հայկական Աշխարհի Երմսական Անիւր կը բանի:)

**ԱՏԵՆԱՊԵՏ .** — Ատենապետ բացուած է: Նախ պիտի դրաղինք վարչութեան կողմէ հասած պաշտօնագրերով: Այս գիրը կը պատկանի բարապաններու և սենեկապաններու համազգեստներու կոճակներուն ինքրոյն: Ինչպէս գիտէք, այս ինդիրը մեզի համար խիստ կարեւոր է, և չորս նիստէ ի վեր կ'ըզարկցնէ իրաւամբ Պատ. Ժողովու, սպաննալով նոյնիսկ պատճառ դառնալ մեր հրաժարման: Ասկէ առանջ, Ժողովու խնայողութեան համար որոշած էր

փոխանակ անագազդնձէ փայլուն կոճակներու , ինչպէս մինչեւ հիմա շուայլաբար կը դորձածուէր բարապաններուն համար , այս անգամ զնեկ անոնց թիթեղէ պարզ կոճակներ , զորս մեր յարգելի և շիրին անդամակիցը ասնքա՛ն ազնուօրէն հայթայթել տուած էր , մանկացած խուրտավաթճիի մը լիքիտասիօնին մասնակցելով , և այսպէսով կարեւոր շահ մը բերելով կեդր . Մատուկին . Վարչութիւնը սակայն բարապաններու բողոքին վրայ՝ յանձնարարած էր statu quoօն պահել , որոյ վրայ Պատ . Խորհուրդս արդարապէս յուզուած՝ երկար ատեն դիմադրեց , բազմաթիւ թղթակցութիւններ և բանակցութիւններ ունեցանք Վարչութեան հետ : Այսօր անաւասիկ Վարչութիւնն դարձեալ կը պնդէ իր նախորդ որոշման վրայ : Ի՞նչ կը խորհիք այս մասին :

ԱՆԴԱՄ ՄԸ . — Էֆէնտիմ , ըստ Ազգ . Սահմանադրութեան Տնտեսական Խորհրդոյս պաշտօնն է կեդր . Մատուկի հասոյթները արդիւնաւորել և ծախքերը կըրձատել . հետեւաբար , Վարչութիւնը իրաւունք չունի այս մասին միջամտելու : Արդէն , կարծես Վարչութիւնը բան գործ բրած է մեզի հակառակ գործել : Անշուշտ կը յիշեք թէ քանի՛ քանի՛ գործնական և օգտակար առաջարկներ և ծրագիրներ , յղացուած մեր կողմէ՛ բարձի թողի եղած են Վարչութիւնէն , մինչդեռ ժամ առաջ զանոնք դորձադրելու՛ն մէջ է Ազգին փրկութիւնը : Վերջին անգամ բարապաններու կոճակներուն խնդրոյն առթիւ առաջարկած էի՝ ի մէջ այլոց՝ չգործածել բարձրահասակ և գերբարապաններ , մինչդեռ ցաւալի է ըսել թէ ճիշտ հակառակն է հիմայ , որով և հարկաւ պիւտածէին մէջ տարուէ տարի զգալի ծախքի առաւելութիւն մը կը տեսնուի ամենչ հաշուատի , մտճակներու , ելն . ի առթիւ : Հետեւաբար կ'առաջարկեմ ձամբել բոլոր մեծղի և գէջ

բարապանները , և գտնել ըստ կարելոյն նիհար և մանրիկ անձինք . այսպէսով թէ՛ երկայնութենէն կը շահինք և թէ՛ յայնութենէն . . .

ԱՏԵՆԱՊԵՏ . — Դեռ ո՛ր մէկը ըսենք . բայց մինչեւ ե՞րբ պիտի համբարենք որ ամլութեան դատապարտեն մեզ , մեր ամենէն գեղեցիկ ծրագիրները մտեալ տառ մնալու սահմանուին . այս վիճակը անհանդուրժելի է . ի՞նչ կ'ըսէք յիսն էֆէնտի :

ՇԻՐԻՆ ԱՆԴԱՄ ՄԸ . — Էֆէնտիմ , պէն բրաթիք պիրիսի իմ , զիյատէ յաֆզլա մէշղուլ օլամամ , զաննրմճա տայաթարմալը , էֆէնտիմ , տայաթարմալը , վէսսէլամ :

ԱՆԴԱՄ ՄԸ (աչեեր խոսք բացած) . — Նէ՛րէյէ տայաթարմալը , շիրին էֆէնտի :

ԱՆԴԱՄ ՄԸ . — Էֆէնտիմ , նէ մինասիպէթ թիւրքճէ գօնուշմաք , Ազգ . ըէսմը պիր չըջանակտա , նէ՛ չըգար . . .

ՇԻՐԻՆԸ . — Թիւրքճէտէն նէ՛ չըգար մի՛ . . . սէն նէ պիլիրսին քի . . . Նաֆաստան քօնսէսիօն չըգար , Զրաաթտան մատէն իմթիաղի չըգար , մօնօրօլ չըգար , կէօմրիւքաէն չըգար , չըգար օղլում չըգար : . .

ԱՏԵՆԱՊԵՏ . — Նիւթէն կը չեղիք կոր :

(Բարապան մը ներս մտնելով կը յայցնէ քէ դուրս պատուները անհամբերութեան նշաններ ցոյց կուտան , եւ քէ կը պահանջեն ներս մտնելու եւ հազիւ այս խօսքերը արտասանած՝ դուրս կը բացուի դուրսէն , եւ բարձրահասակ մարդ մը—սպագրիչը—առանց իսկ կանչուած ըլլալու , ներս կը մտնէ :)

ՏՊԱԳՐԻՉԸ . — Էֆէնտիներ , սա մեր պզտիկ հաշիւ մաքրեցէք որ կրթամ , մենք դորձի մարդիկ ենք , մեզի այսպէս ժամերով սպասցնելը խղճի դէմ է և ամօթ :

Մէկը (գայրակիր) — Էֆէնտիմ, ժողովս անարգեց :

ՌԻՐԻՇ ՄԸ. — Նախատինք ըրա . . .

ՌԻՐԻՇ ՄԸ. — Չէ՛, սպառնայիք ըրա . . .

ԱՏԵՆԱՊԵՏԸ. — Հէ՛մ նախատինք ըրա, չէ՛մ սպառնայիք :

ԱՆԴԱՄ ՄԸ. — Չենք կրնար ըսել զինքը, քանի որ Պատկ. ժողովս անարգեց :

ՇԻՐԻՆԸ. — Մէթայիկ չենք կրնար տալ մէկու մը՝ որ ժողովս կը նախատէ . . .

(Խեղն մարդը՝ որ չէր նախատեամ քէ բերեկն ելած մէկ փոքրիկ բառը մինչեւ այսեղերը պիտի տանէր զինքը, երբ կը պատահուէր չմեղանքի բառ մ'արտասանել բարապանները քեւեհեհ բռնելով՝ դուրս կը հանեն :)

ԱՏԵՆԱՊԵՏԸ. — Շարունակե՛նք :

ՇԻՐԻՆԸ. — Չէ՛, նախ սա դուրսինները ճամբքոյն : (հարսուղարին) Պետրոսիկ, ըսածս ստուգեցի՞ր :

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ. — Այո՛, Էֆէնտիմ : Ներսէսի հայրը՝ Նչան աղա մեռած է Լանկայի մէջ 57 տարեկան . ամուսնացած ատենը միայն վճարած է կրկու տարուան Ազգ. տուրք . հետեւաբար, կը պարտի դեռ 35 տարեկան, որ ամենամուտազ սակով՝ այսինքն՝ 25ականէն կ'ընէ 875 դրշ . ինքը՝ Ներսէս Էֆէնտի ալ կը պարտի 3 տարեկան՝ որ կ'ընէ 75 դրշ . ընդամէնը 950 դրշ . :

ՇԻՐԻՆԸ (բարապանին). — Ներս կանչէ թղթաւածառ ներսէս Էֆէնտին :

(Թղթալանաւոր ներս կը մտնէ :)

ՇԻՐԻՆԸ. — Ի՞նչ է ձեր հաշիւը, Ներսէս Էֆէնտի :

ԹՂԹԱՎԱՃԱՌԸ. — Չեզ զրկած Գարուայիս համեմատ՝ յանձնած եմ պատրիարքարանի 40 թօփ գծաւոր թուղթ, զին 600 դրշ . 5 կրօցա մատիտ, 180 դրուշ, 2 թօփ ձծան թուղթ, 20 դրշ . 40 տուփ ծայր, 100

դրշ . 2 տուղինա գրչակոթ, 10 դրշ . ընդ . դումար 910 դրուշ :

ՇԻՐԻՆԸ. — Անանկ է նէ 40 դրշ . պիտի վճարէք :

ԹՂԹԱՎԱՃԱՌԸ (գարուացած). — Ի՞նչ հաշիւ է այս :

ՇԻՐԻՆԸ. — Էֆէնտիմ, ժամանակ չունինք քեզի երկար բարակ բացատրութիւն տալու . անուստիկ խընդիրը . հանգուցեալ հայրդ՝ Նչան աղա 35 տարուան Ազգ. տուրք կը պարտի, որ կ'ընէ 875 դրշ . դուք ալ երեք տարեկան 75 դրշ . դումար՝ 950 դրուշ : Չեր պահանջքն է 910 դրուշ, հետեւաբար դեռ պարտական կը մնաք 40 դրուշ եւս, ասկէ պարզ բան ի՞նչ կայ :

ԹՂԹԱՎԱՃԱՌԸ. — Էֆէնտիմ, կատակ կ'ընէք . հայրս 10 տարիէ ի վեր մեռած է, ինչպէ՞ս անոր ազգային տուրքը կը պահանջէք ինձոյ, և յետոյ առեւարական հաշիւը ուրիշ՝ տուրքը ուրիշ . իմ 3 տարուան պարտքիս դարձն անշուշտ պիտի վճարեմ պատե՛ն ասթիւ, բայց չեմ կրնար Գարուայիս հետ հաշուակցիլ :

ՇԻՐԻՆԸ. — Ա՛յո ա՛յո է Էֆէնտիմ . չենք կրնար տարբեր կերպով շարժիլ . եթէ դժգոհ էք, կրնաք ուղած տեղերնից դիմել բողոքելու համար :

ԹՂԹԱՎԱՃԱՌԸ (նախ՝ խօսիլ). — Բայց ստիկա անիրաւութիւն է, պիտի կործանէք դիս . (ապա պաղասազին) ինդրեմ, Էֆէնտիներ, վեհանձն եղիք, դուք ալ վաճառական եղած էք, մնանկանալու դուրը հասած եմ :

ՇԻՐԻՆԸ. — Այո՛, կը հասկնանք ձեր վիճակը, բայց ձեռքերնուս բան մը չի գար, ի՞նչ ընենք, ազգային դրամ է . եթէ մեզի հետ անձնական գործ մ'ըլլար, այն ատեն խնդիրը կը տարբերի, պայմանաւոր մը կուտայինք, կամ նոյն խել կը բաշխէինք դաջն ձեզ : Հա՛, միտքս բան մը եկաւ, զիւրութիւն մը կրնամ տալ ձեզ, պարտական եղած 40 դրուշին համար ամսուան մը պայմանաւորաբար կուտանք, գո՛ չէ՞ք :



(Քարապաններ՝ բեւերը մեզմ գուրս կը հանեն խեղճ մարդը, որ նուազումի նշաններ ցոյց կուտայ):

**ՇԻՐԻՆՆԷ՛** (բարապանին) . — *Գնա՛, սա գուրսը մնացածներուն ալ ըսէ որ յաջորդ շարժու թող գան, այսօր ո՛չ մեծամասնութիւն կայ, ո՛չ ալ ժողով:*

**ԱՏԵՆԱՊԵՏ** . — *Այժմ պիտի գբաղինք հանդարտօրէն՝ քանի որ մեզի անհանգիստ ընող չունինք՝ տուրքերու նոր սակացոյցի պատրաստութեան խնդրով . նախկինն այնչափ հինգած է որ այլևս անգործածելի դարձած է, և նորի մը պէտքը անհրաժեշտ և անյետաձգելի պահանջք մ՛ է: Ինչպէս պիտէք, տուրքերը կը բաժնուին երկու դասակարգի ուղղակի և անուղղակի տուրք: Ուղղակին է Ազգ. տուրքը, որ ըստ Սահմանադրութեան անուազն 75 դրշ. է տարեկան, և հետեւաբար առայժմ չենք կրնար փոփոխել զայն: Բայց, ցաւալի է որ ժամանակի ընթացքին մէջ այս միևիմօտ քանակը 25ի վերածուած է կարգ մը ազգամիաս անձերու կողմէ: Ուստի, կ'առաջարկեմ նախ՝ պահել Ազգ. Սահմանադրութեամբ տուրքի նուազագոյն սակ որոշուած 75 դրշ.ը և երկրորդ՝ այդ տուրքը ապահովապէս և առանց կորուստի գանձելու համար ամէն միջոց ձեռք առնել:*

**ԶԱՅՆ ՄԸ** . — *Ահա՛ ամենէն կարեւոր խնդիրը աչսօր Ազգին մէկ շատ աննշան մասն է որ իր տուրքի պարտականութիւնը կը կատարէ. պէտք է խիստ և կարուկ միջոցներ ձեռք առնել որը օրին գանձելու համար այդ տուրքերը: Արդէն, օրէնքը կ'ըսէ որ՝ մէկը որ իր տուրքը չհատուցաներ, կը զրկուի իր քաղաքացիական իրաւունքներէն, բայց ասիկա բաւական չէ. կան անանկներ, որոնք նախամեծար կը համարեն քուէ չտալ, քան թէ վճարել իրենց բոլոր պարտքերը: Ես պիտի առաջարկեմ աւելի ազդու պատիժ մը, զոր օրին*

*նակ՝ ինչպէս կ'ըլլայ եթէ իրենց տուրքը չհատուցները Հայ Ազգութենէն վտարենք, կամ եկեղեցւոյ հողորդակցութենէն գրկենք . . .*

**ՈՒՐԻՇ ՄԸ** . — *Ատիկա շիչ մը գժուար պիտի ըլլայ. աւելի լաւ է, ինչպէս կատարութիւնը գաւառներու մէջ կ'ընէր երբեմն, տուրքի հաւաքիչներուն հետ ընկեր տալ մէկ քանի հատ ժամատարձա, որոնք պարտաւրով տուները, հաւաքէին պարտքերը, և չհատուցները բանտարկէին, կամ գոյքերնին հաճոյք ընէին, և կամ ծախելով՝ գանձէին գումարը:*

**ԱՄԷՆԻՔԷ** . — *Շտալօ՛, կեցցես, անաստիկ ամէնէն գործնական և ազդու միջոցը, որոշելինք, գնայ:*

**ԱՏԵՆԱՊԵՏԸ** . — *Ուրեմն, պրենք վարչութեան որ ժողովս տուրքերու կատարուող և արդիւնաւոր գանձման համար այս միջոցը յարմար կը տեսնէ, և խնդրենք իրմէ որ քաղաք մը գրէ Բ. Երան և բաւականաչափ ժանտարձա և ստանդարտութե, ընկերակցելու համար մեր հաւաքիչներուն: Ինչ հիմա անշուշտ անուղղակի տուրքերուն, ասանք են՝ կալուածական, ֆէրագի և խիթիգալի իւրախապէսներու, ինչպէս նաև ծննդեան, մկրտութեան, մահուան, ամուրիութեան, ժառանգական վկայագրերու, նշանախօսութեան և ամուսնութեան տուրքերը: Ասոնցմէ զատ կան նաև քանչէլէրի, մուգաթթայի, և ուրիշ մը քանի մանր մունր տուրքեր այ, որոնցմով այսօր չպիտի գբաղինք: Բոլոր այս տուրքերուն սակերը, նախկին համեմատութեամբ, այսինքն մինչև հիմա գործադրութեան եղող չափով, աննշան կոչուելու աստիճան նուազ են. ես կ'առաջարկեմ բանաւոր և բաւականաչափ աստիճանի մը բարձրացնել զանոնք: Զորօրինակ՝ կալուածական վկայագրերու համար 1000ին 250 գանձել:*

ԱՆԴԱՄ ՄԸ. - Ամէնէն բանաւոր եղանակն է, երբ մէկը առն մը գնելու գամ ծախելու համար իրմութեան պէր կ'առնէ, այդ տունին կէս բաժինը վար գնել իբր տուրք: Այս կերպով Ազգը կալուածի տէր ալ կ'ըլլայ և կ'օժտուի հասոյթի հաստատուն ազբուրներով:

ՈՒՐԻՇ ՄԸ. - Շատ լաւ խելք է, բայց գործադրութեան մէջ արդեւքի պիտի բաղխինք, ծանր է բուրով չպիտի համակերպին, եթէ կ'ուզէք թեթեւցնենք քիչ մը:

ՇԻՐԻՆԸ. - Բերներնուն ինկեր է չհամակերպիլ . . . մենք ալ իրմութեան պէր չենք տար, այն ժամանակ ի՞նչ պիտի ընեն: Բայց եթէ կ'ուզէք, իրաւախոհութեան համար չորս բաժին մէկը կ'ընդունիմ, այսինքն չորս սենեակնոց տունի մը մէկ սենեակն և չորս յարկնոց արարթմանի մը մէկ յարկն ազգային սեպհականութիւն պիտի ըլլայ:

ԱՄԷՆՔԸ. - Անա տուրքի ձեւ մը, որ թէ՛ դիւրին է և թէ՛ թեթեւ: Ժողովուրդին ալ մեծ դիւրութիւն մը պիտի ըլլայ ասիկա: Կ'ընդունինք:

ԱՆԴԱՄ ՄԸ. - Իսկ գալով ծննդեան և մկրտութեան պարտաւորութեան, ևս կ'առաջարկեմ գանձել անոնցմէ այնքան տուրքի գումար, որքան որ պիտի ծախուի կնուսքի հանգիստագրութեանց համար. ասիկա յառաջանակա՛ն տուրք կոչուած գրութեան մէկ ձեւն է, որ ամէնէն արդար տուրքի բաղձման սխիթէմն ըլլալով՝ Թրանսայի պէս լուսաւորեալ երկրի մը մէջ անգամ չէ կրցած դարձնուիլ գործադրուիլ հակառակ Մ. Գալլուի բուն ջատագրութիւններուն: Ասով ընկերակարականներն անգամ բողոքելու իրաւունք չպիտի ունենան . . .

ՇԻՐԻՆԸ. - Գաղտւլ . . .

ԱՆԴԱՄ ՄԸ. - Մահուան վկայագրոց համար ալ

յուզարկուորութեան համար ծախուած գումարին համահասար ջանակութեամբ գումար մը:

ԱՄԷՆՔԸ. — Այո՛, այո՛, անշու՛շա:

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ժառանգական տուրքին ալ այն տեսակ հասոյթներ են որոնցմէ ամենէն աւելի շահ ստանալու իրաւունք ունինք: Ի՞նչ սակ կ'առաջարկէք:

ՄԷԿԸ. — 30 առ հարիւր:

ՈՒՐԻՇ ՄԸ. — 40:

ՇԻՐԻՆԸ. — 50:

ԱՏԵՆԱՊԵՏ. — Շատ չէ՛:

ՇԻՐԻՆԸ. — Ի՞նչ կ'ըսէք կոր էֆէնտիմ, Անպիտոյ մէջ անգամ ժառանգական տուրք կը դանձնն 100ին 10 համեմատութեամբ: Արդ, երբ Անպիտոյ պէս հարուստ երկրի մը կառավարութիւնը 100ին 10 գանձէ, մեզի պէս աղքատ ժողովուրդի մը համար 50ն ալ քիչ է:

ՉԱՅՆ ՄԸ. — Շատ լաւ ուրեմն, թող 60 ըլլայ:

ԱՄԷՆՔԸ. — Ընդունուած է:

ԱՏԵՆԱՊԵՏ. — Հասանք այժմ նշանախօսութեանց և ամուսնութեանց սակագին: Կը խնդրեմ որ լրջօրէն նկատի առնէք այս խնդիրը, և ըստ այնմ հարկ եղածը սահմանէք:

ՄԷԿԸ. — Նախ և առաջ սա՛ ձրիի պրոսթիւնը ջրնջնք. ի՞նչ խայտառակութիւն է այս, մէկը որ դրամ չունի, ինչպէ՛ս կ'ամուսնանայ . . .

ՇԻՐԻՆԸ. — Կը ձայնակցիմ, թող չամուսնանայ՝ էֆէնտիմ . . . բարայր վեռնի սիւսիլի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ. — Լաւ ուրեմն, ջնջուած է:

ՈՒՐԻՇ ԱՆԴԱՄ ՄԸ. — Ես ալ պիտի առաջարկեմ փոխանակ ըստ հոյն ութ աստիճանի բաժնելու կարգերը, երեքի վերածել զանոնք. այսպէս Ա. կարգ՝ առնալ որ հարուստ, գեղեցիկ և զարգացած կին կամ

էրիկ կ'առնեն . Բ . կարգ՝ անոնք որ միայն գեղեցիկ և զարգացած ամուսիններ կ'առնեն և Գ . կարգ՝ անոնք որ միայն զարգացած լծակիցներ կը գտնեն : Այսպէսով անիրաւութիւն ալ չըլլար և ժողովուրդը սիրով և յօժարութեամբ կը վճարէ իրեն համար սահմանուած տուրքը : Արգարեւ , Ձենէ ո՞վ զոհողութեանց առջեւ պիտի ընկրկեր , երբ այս երեք բարեմասնութիւններով օժտուած ազջիկ մը գտնէր : Այժմ սահմանենք տուրքին քանակը : Ի՞նչ պիտի տայիք գործիւնակ եթէ դուք լինէիք՝ հարուստ , գեղեցիկ և զարգացած ազջկան մը համար :

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՆԴԱՄ ՄԸ . կեանքս և հողիս . . .

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ի կարգ կը հրաւիրեմ զՁեզ :

ՈՒՐԻՇ ՄԸ . — Գոնէ 100 ոսկի մը տալու է :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ընդունուած է . իսկ միւսներուն համար :

ԱՆԴԱՄ ՄԸ . — Բ . կարգին համար 40 ոսկի և Գ . ին համար 10 ոսկի :

ՇԻՐԻՆԸ . — Գապո՛ւլ , գապո՛ւլ :

ԱՆԴԱՄ ՄԸ . — Թող աւելցուի նաև որ Օսմ . ոսկի պիտի ըլլայ , և քեզապլլըները չպիտի ընդունուին :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Բայց էն կարեւորը մոռցանք : Հապա ո՞վ պիտի ստուգէ ամուսնացողներու նիւթական , ֆիզիքական և մտաւորական աստիճանը :

ՉԱՅՆ ՄԸ . — Քննիչներ կարգենք :

ՈՒՐԻՇ ՄԸ . — Շիրին էֆէնտին թող թեկնածուներու նիւթական վիճակը քննէ :

ՈՒՐԻՇ ՄԸ . — Ֆիզիքական քննութիւնն ալ ես կը կատարեմ :

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՆԴԱՄԸ . — Ատիկա ինծի կը պատկանի . չէնքի մը յօրինուածքը , ոճը , կարկառուն և խո-

րաքանդակ մասերը ինձմէ աւելի ո՞վ կրնայ դնահատել :

ԱՏԵՆԱՊԵՏԸ . — Ուրեմն քուէարկութեան կը դնեմ . ո՞վ յարմար կը դասէք որ քննիչ կարգուի ֆիզիքական ստորոգելեաց :

(Քուկարկութիւն կատարուելով նարսարայէքը մեծաւսումը կը շահի :)

ՄԻՒՄԸ . — Գոնէ դիւ ալ օդնական կարգեցէք :

ՇԻՐԻՆԸ . — Վէրտիք կիթաի :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Իսկ մտաւորական վիճակը ստուգելու համար ալ նիւթական Ուսումն . կործարգոյ քննութեան կ'ենթարկենք :

ԱՄԷՆՔԸ . Բնական է :

(Այս միջոցին բարապան մը անապարանօք ներս կը մտնէ , եւ կնկուած նամակ մը կը յանձնէ Ատեապետին , յայտնելով որ Վարչութեան կողմէ դրկուած է , եւ խընդրուած որ սխալողութիւն տեսնելով՝ այսօրուան նիւթին իսկ նկատի առնուի :)

Կը կարգացուի պատշտագիրը , որով կը յայտնուի թէ երուստպետի Միաբանութեան մէջ խռովութիւնները վերակսած ըլլալով՝ որսուած է նոր պատուիրակութիւն մը դրկել , բաղկացած Գոհարալանգառեան եւ Մեղրեան Եպիսկոպոսներէն , Ընծայ Էֆէնտիէ , երկու հաւուակալներէ եւ չորս նետուրդներէ , եւ կը յանձնարարեք անոնց ամսականի եւ նամբու ծախքի մասին հարկ եղածն ի գործ դնել :)

ԱՆԴԱՄ ՄԸ . — Գոհարալանգառեան եւ Մեղրեան Սրբազաններուն համար ըսելիք չկայ , արդէն հեռուէն հեռու ազգականութիւն ունիմ անոնց հետ , գոհարի և մեղրի պէս մարդիկ են . Ընծայ էֆէնտին ալ երկինքէն Ազգին համար դրկուած չքնառ ընծայ մըն է , պատուիրակ ըլլալու համար ծնած և արհեստին միակ մասնա-

գէտը : Բայց , հետևորդներուն մասին դիտարկութիւն մ'ունիմ , պէտք է որ գոնէ զանոնք ալ մենք ընտրենք . մեր Պետրոսիկին եզրայր կայ՝ խեղճ մարդը գործէն ելած է , մեծ բարիք մը կ'ըլլայ իրեն , մէկ քանի ասորուան պիտոճէն կը չինէ :

ՇԻՐԻՆԸ . - Ես ալ մէկը պիտի առաջարկեմ , որ քիչ շատ հաշուակալութիւն գիտէ , և պէտք է որ պատուիրակութիւն ընկերակցի իբր հաշուակալ :

ՈՒՐԻՇ ՄԸ . - Ես ալ կը պահանջեմ որ իբր երկրորդ հաշուակալ զրկուի մեր մաղաղային գրագիրը , կազանգին ո՛չ յաւելում և ո՛չ ալ նուէր ըրի տղուն , և գլուխ կը տանի կոր միշտ իր գանգատներով : Ասանկով լաւագոյն նուէրը ըրած կ'ըլլամ իրեն , և միեւնոյն ժամանակ մի քանի ամսական ալ կը շահիմ :

ՁԱՅՆ ՄԸ . - Բայց , եթէ վարչութիւնը չընդունի որ մենք ընտրենք հետևորդները . . .

ՇԻՐԻՆԸ . - Ինչպէ՛ս չընդունիր քանի որ մենք է որ պիտի վճարենք պատուիրակութեան ծախքերը . հիմայ իսկ ամէն բան սրտչենք և յայտագրենք , այսպէսով fait accompli առջև գրած կ'ըլլանք վարչութիւնը , որը , կը վստահանեմ զձեզ թէ ընտ. չպիտի համարձակի մերժել զայն : Ամսականները և ծախքերը որոշենք :

ԱՆԴԱՄ ՄԸ . - Ես կը կարծեմ որ երկու եպիսկոպոսներուն և Բնձայ էֆէնտիին համար 40ական ոսկի ամսականը բաւական է :

ՈՒՐԻՇ ՄԸ . - Ի՛նչ կ'ըսես եղբայր . այդչափ ջնջին գո մարտիկ ինչպէս երկու բարձրաստիճան եկեղեցականները և լիազոր պատուիրակ մը ապրին Պաղեստինի մէջ իրենց պիրֆին վայելչութեամբ : Գոնէ 50ական ոսկի տանք :

ՄԻ ՔԱՆԻ ՀՈԳԻ . - Տոխնք գնայ :

ԱՆԴԱՄ ՄԸ . - Գանք հիմա հետևորդներուն . ևս իմ առաջարկած մարդու համար կը պահանջեմ 35 ոսկի ամսական :

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆ (մեկեմ) . - Ընդունելի՛ է :

ՄԻՒՍԸ . - Ես ալ մեր հաշուակալին համար 25 ոսկիով կը գոհանամ , բայց որովհետև իմ ջրվա եղած տան 5 ոսկի կ'առնէր , և ճանապարհորդութեան միջոցին պիտի կորեմ ամսականը , զրկանք մը չըլլալու համար պէտք է որ այս 5 ոսկին ալ վրան բարդուի :

ԱՄԷՆՔԸ . - Իրաւացի է :

ՈՒՐԻՇ ՄԸ . - Ես ալ խօսած տղու համար 20 ոսկիէն մէկ փարայ պակաս չեմ ընդունիր :

ԱՄԷՆՔԸ . - Իրաւունք ունիք :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Ճանապարհածախսի՝ երթալ գալու ամէնուն 200 ոսկին կը բաւէ :

ԱՆԴԱՄ ՄԸ . - Ի՛նչ կ'ըսէք , Ասենապետ էֆէնտի , ևս այն կողմերը ճակարգած եմ , հոն երթեալը սուղ է , մանաւանդ 7-8 հոգիէ բաղկացող պատուիրակութեան մը համար . այդ գումարը հաղիւ երթալու կը բաւէ միայն :

ԱՏԵՆԱՊԵՏ . - Լաւ ուրեմն , թող 400 ոսկի ըլլայ , կ'ընդունիք :

ԱՄԷՆՔԸ . - Այո՛ , այո՛ , այո՛ :

ՄԷԿԸ . - Իսկ ևս կ'առաջարկեմ որ Յակոբ անական ալ կանխիկ տրուի , խեղճ տղան հոս պարտքերուն , պէտք է չմեկնած վճարէ զանոնք :

ԱՄԷՆՔԸ . - Մտաբախոյս :


(Ապա՝ ընտանեւեւ անդամները՝ այս բարի լուրը ժամ առաջ հայտըղելու համար իրենց պաշտպաններուն , կ'աւազարկեն Ասենապետին փակել այլեւ Ասեանը , զու վրայ՝ գոն ևս ուրախ սպաւորութեան մը ներքեւ կը ցուլին :)

Վ Ե Ր Ձ



910

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*



Հայաստանի Ազգային գրադարան



NL0432486

34

38889